

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՍՊԱՐԷԶՈՒՄ

Հարագատ են ինձ բոլոր երեխաները, ձեր աշխարհը, որը եւ իմ աշխարհն է. սիրում եմ ձեզ եւ ձեր աշխարհը:

Յովհ. Թումանյան

Թումանյանի կեանքի եւ գործունեության կարեւոր բաղադրամասն է նաեւ մանկական «Լուսարեր» եւ «Հայ գրողներ» դասագրքերը եւ քրեատոմատիաները կազմելու, «Հասկեր» մանկական ամսագրին աշխատակցելու, երբեմն նաեւ «Հորիզոնը» խմբագրելու աշխատանքի բնագաւառը: Թերեւս զարմանալի է, սակայն բանաստեղծի գործունեության այդ ոլորտին եւ գրական ժառանգությանը նուիրուած որեւէ գիտական շատ թէ քիչ հանգամանալից ուսումնասիրութիւն ղեռեւ չի ստեղծուել չնայած թումանյանագիտութեան երախտաւորների կողմից այդ թեմայի որոշ արծարծումներին:

1903 թ. յունիսի 12-ի ցարական հրովարտակով հայկական դպրոցների փակումից եւ եկեղեցական հողերի գրաւումից երկու տարի անց՝ 1905 թ. օգոստոսին, դպրոցները վերաբացուեցին եւ հողերը վերադարձուեցին: Համընդհանուր եռուզեռը մտաւորական շրջաններում աշխուժացրեց նաեւ պարբերական հրատարակութիւնները: Այդ նոյն ժամանակահատուածում սկիզբ է առնում բուռն ոգեւորութիւն մանկական գրականութեան ու նաեւ դպրոցների շուրջ: Ուսուցչական միութիւնը հրատարակում է «Նոր դպրոց» ամսագիրը: Ստեփան Լիսիցեանը եւ նրա կինը՝ Եկատերինա Լիսիցեանը, նախաձեռնեցին «Հասկեր» մանկական ամսագրի հրատարակութիւնը: Յայտնի մանկավարժն ու հրատարակիչը «Հասկերի» շուրջն է համախմբում ժամանակի նշանաւոր մանկագիրներին ու արուեստագէտներին՝ Յովհ. Թումանյանին, Ղ. Աղայեանին, Ա. Ահարոնեանին, Ա. Իսահակեանին, Յ. Աղա-

բարին, Հ. Հայրապետեանին, Ա. Խնկոյեանին, Գ. Մեսեանին, Վ. Սուրճեանեանին, Փ. Թերրեմեզեանին, Վրթ. Փափազեանին, Գ. Բաշինջաղեանին, Ե. Թաթևոսեանին, Վ. Ախիկեանին, Բոտերին, Շիրվանզադէին, Յովհ. Յովհաննիսեանին եւ մի շարք երիտասարդ խոստումնալից բանաստեղծների: Ընդ որում, նրանցից չատերը իրենց ստեղծագործական ուղին սկսեցին հենց «Հասկերում»: «Սակայն, - գրում է Ստ. Լիսիցեանի դուստր Նազելի Լիսիցեանը, - Յովհաննէս Թումանեանի մասնակցութիւնը առանձնապէս մեծ էր ինչպէս ամսագրի, այնպէս էլ անձամբ իր համար»<sup>1</sup>:

Ամսագրում տպագրում էին յօդուածներ հայ իրականութեան երկու հատուածների՝ թէ՛ արեւելահայ, թէ՛ արեւմտահայ կրթական համակարգերին վերաբերող ամենաբազմազան խնդիրների մասին: Հիմնականում այդ արծարծումները ճանաչողական էին, եւ զրանց նպատակն էր եւ՛ ամենայն մանրամասներով ներկայացնել հայկական դպրոցներին վերաբերող գանազան վիճակագրական տուեալներ, եւ՛ բարձրացնել նրա բոլոր հոգսերը՝ միաժամանակ շանտեսելով եղած թերութիւնները<sup>2</sup>:

1905 թ. սեպտեմբերից «Հասկերի», իսկ 1907 թ. «Լուսաբեր» դասագրքի հրատարակութիւնը աննախադէպ սոստաձեռն ու բեղմնաւոր դարձրեց Թումանեանի գրիչը մանկական գրականութեան ասպարհում եւ խլեց նրա ողջ ազատ ժամանակը: Եթէ մինչեւ 1905 թ. լոյս տեսնող «Աղբիւր» հանդէսի գլխաւոր աշխատակիցը Ղ. Աղայեանն էր, ապա «Հասկերի» ողին ու սիւնը դարձաւ Հ. Թումանեանը: Ի տարբերութիւն «Աղբիւրի»՝ «Հասկերը» հրատարակում էր կանոնաւոր առանց բեղմնիւնների:

<sup>1</sup> Տե՛ս «Գոյու Արմենիի», (ոուսերէն), Եր., 2008, նոյեմբերի 20.

<sup>2</sup> «Հասկերի» 1908 թուի ապրիլի համարում հրատարակում է Պոսի պատրիարքարանի «Վիճակացոյցը», որի համաձայն մինչեւ 1908 թուի յունուարը Պոսի բոլոր թղթերում հայոց վարժարանների թիւը եղել է 42, որտեղ սովորում էին 5379 աշակերտ, որոնցից 2924 տղայ եւ 2450 աղջիկ: Վարժարաններում աշխատում էին 294 ուսուցիչներ, որոնցից 126՝ վարժուհիներ: Նոյն հարցրումը տեղեկացնում էր նաեւ դպրոցներին յատկացուող նիւթական միջոցների մասին. «Դպրոցները պահում են եկեղեցիների սնդուկների օժանդակութեամբ (50454 դր.), աշակերտների բոշակադրամով (31557 դր.) եւ մասնաւոր նուէրներով (2220 դր.), որով ամսական ծախք բոլոր դրպրոցների վրայ գնում է 84231 դր.: Բացի այս դպրոցներից Պոսում հայ մանուկներ յամախում են եւ պետական ու այլ դպրոցներ, մոտաւորապէս 1500 հոգու չափ: Դպրոցները զանազան տիպի ու դասընթացքի են» («Հասկեր», Թիֆլիս, 1908, թիւ 4, էջ 438):

«Հասկերի» եւ «Աղբիւրի» միջեւ ձեւաւորում է ազնիւ մրցակցութիւն: 1908 թ. Տիգրան Նազարեանը որոշում է միջոցներ ձեռնարկել «Աղբիւրի» ծաւալները մեծացնելու, «նոյն բովանդակութեամբ եւ սիրուն պատկերներով... ընտիր թղթի վերայ եւ շփեղօրէն» նաեւ կանոնաւոր հրատարակելու նպատակով: «Ամբողջ քանակից տարի հայ մատաղ սերնդի համար ուսման աղբիւր է եղել այս ամսաթերթը. չունենալով միեւնոյն ժամանակ իւր մրցակիցը. եւ այժմ էլ նա պահում է իւր դիրքը պատուաւոր. միայն ափսոս, որ հայ հասարակութիւնը սառնասիրտ է դէպի «Աղբիւրը», - գրում է «Հասկերի» խմբագրութիւնը եւ հայ հասարակութեանը խորհուրդ է տալիս. «...անպակաս անել «Հասկերն» ու «Աղբիւրը»: Մայր սարերի կարկաչանոս աղբիւրն ու մայր դաշտերի լեցուն հասկերը թող հայ մանկան ծարաւն ու միտքը յարատեւ յագեցնեն:

Անպայման անհրաժեշտ է ապահովել դոցա գոյութիւնը»<sup>3</sup>:

Երկու մրցակից մանկական ամսագրերի խմբագրութիւնների միջեւ այսպիսի համերաշխութիւնը օրինակելի է բոլոր ժամանակների համար:

Ամսագրի անդրանիկ համարի առաջին էջը բացում է «Գառնիկ ախպերով»: Ամսագրի յաջողութեանը նպաստում էին նաեւ Գարեգին Երիցեանի եւ Ռոտտերի «չգերազանցուած նկարագրողումները»<sup>4</sup>:

Թումանեանը յաճախ էր մասնակցում «Հասկերի» խմբագրական ժողովներին: Սրտին մօտ էր ընդունում ամսագրի իւրաքանչիւր յաջողութիւնն ու անյաջողութիւնը:

Անկեղծ ուրախանում էր ձեռք բերած իւրաքանչիւր նիւթի համար եւ իր երախտագիտութիւնն էր յայտնում թէ՛ իբրեւ ամսագրի աշխատակից, թէ՛ իբրեւ խմբագիր:

1910 թ. հոկտեմբերի երկրորդ կէսին Ստեփան Լիսիցեանի՝ Եւրոպա մեկնելուց յետոյ ձեւաւորում է «Հասկերի» խմբագրական նոր կազմ՝ Թումանեանի նախագահութեամբ, հետեւաբար 1910 թ. նոյեմբերի համարը տպագրուել է Թումանեանի խմբագրութեամբ: Այդ համարում են լոյս տեսնում բանաստեղծի «Բարեկենդանը», «Սոխակի վիշաք», «Սուտլիկ որսկանը»: Թէեւ հէնց սկզբից Թումանեանը «Հասկերի» հիմնական աշխատակիցն էր, բայց տարէցտարի ամսագրի հետ նրա կապերը աւելի էին սերտանում: 1908 թ. յունուարի 22-ին ընկերոջը՝ Փիլիպոս Վար-

<sup>3</sup> «Հասկեր», Թիֆլիս, 1908, թիւ 4, էջ 438:

<sup>4</sup> Թումանեանը ժամանակակիցների յուշերում, Ե., 1969, էջ 765: Այսուհետեւ ԹժՀ, էջը՝ տեքստում:

գազարեանին, տեղեկացնում է. «Էս տարի կապուել եմ «Հասկերի» հետ, որ ամէն ամիս բան տամ ու մօտիկ խառնուեմ գործին: Ռուստեմն ու Մարիա Մարկովնան էլ մօտեցել են «Հասկերին»<sup>5</sup>: Թումանեանը նկատի ունէր իշխանուհի Մարիամ Թումանեանի կողմից ամսագրի «մի ամբողջ բաժնի» ղեկավարութիւնը «Մարիամ տատիկի» անուան տակ: Երբ Լիսիցեանը հրաւիրում է Մարիամ Թումանեանին ամսագրին աշխատակցելու, իշխանուհին առաջարկում է երեխաների եւ խմբագրութեան գրադարութիւնն արտացոլող բաժնի բացել: Նա նկատի ունէր իր մանկութեան տարիներին Փարիզից ստացած «St. Nicolas» ֆրանսերէն շարաթափերթի օրինակը:

Երեխաներից ոմանք այնքան էին կապում խմբագրութեան հետ, որ սկսում են անձամբ թղթակցել ամսագրին՝ դառնալով ներառ աշխատակիցները: Նրանցից մէկն էր Կարսից «Գիժ Աղասին», որն եղել է նաեւ «Աղբիւրին» թղթակցող Գ. Էփրիկեանը<sup>6</sup>:

Կարճ ընթացքում երեխաների նամակները այնքան են շատանում, որ «Մարիամ տատիկը» ստիպւում ներողութիւն է խնդրում երեխաներից, որ, «պառաւ լինելով», չի կարող բոլորին սուանձին-առանձին պատասխանել: Երեխաները կաճախ ցանկանում էին անձամբ ծանօթանալ «Մարիամ տատիկին», սակայն իշխանուհին միշտ խուսափում էր ու մերժում, իրրեւ թէ շատ է պառաւ, հիւանդ է եւ անկողնու մէջ է<sup>7</sup>:

<sup>5</sup> Յովհաննէս ԹՈՒՄԱՆԵԱՆ, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, է.10, Ե., 1999, էջ 38: Այսուհետեւ ԵԼԺ, հատորն ու էջը՝ տեքստում:

<sup>6</sup> Մի անգամ Թումանեանը, խմբագրատանը տեսնելով Գ. Էփրիկեանին, գրացել է նրա հետ՝ շփոթեցնելով երեխային, որի համար նա մանկական աշխարհի կուռքն էր. «Գիժ Աղասին խօսում էր բրտիմբր քակատին ու պատասխանի բռտերը լրի չէր կարողանում վերջացնել, կիսատ-պոստ էր խօսում: Յուզուած, շփոթուած էր. ես, Թումանեանի հետ... երեսակայն՝ս կր... Այդ օրը նրա ուրախութեանը չափ չկար» (ԹԺԶ, 536): Ահուհետեւ նա, ինչպէս Թումանեանին հանդիպած ցանկացած երեխայ, ամէնքին պատմում էր, որ ծանօթացել է Թումանեանի հետ:

<sup>7</sup> Տարիներ անց երիտասարդ դարձած այդ փոքրիկներից մէկին իշխանուհու րարեկամներից մէկը ծանօթացնում է նրան՝ տեսլով. «Ահա Բեզ եւ «Մարիամ տատիկը», որին դու մանկութեանդ օրերին այնքան փափագում էիր տեսնել: Չարմացած երիտասարդը հիասքափում է՝ զգալով, որ իրենից իդեցին մանկութեան հէֆիաքը, եւ ասում է. «Դուք էանդեցիմ իմ երեսակայած պատկերը... այժմ ես կորցրեցի իմ մանկութեան յիշողութիւններից մէկը» (ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆԵԱՆ, «Իմ համառօտ կենսագրութիւնը եւ իմ յիշողութիւնները», Ե., 2003, էջ 129):

«Հասկերի» էջերում պատշաճ տեղ էր յատկացում թէ՛ հեղինակային, այդ թվում նաև ժողովրդական ակունքներ ունեցող, թէ՛ բուն ժողովրդական, թէ՛ թարգմանական ստեղծագործություններին: Թումանյանը հենց «Հասկերում» բացեց մանկական գրականությունից զարգացման այն մայրուղին, որով ընթացան այն ժամանակ սկսնակ բանաստեղծներ Ա. Խնկոյեանը, Յ. Աղաբաբը, Հ. Հայրապետեանը, Ա. Ապրեսեանը, Ս. Տէր-Սահակեանը, Գ. Մեսեանը, Վ. Աղասեանը եւ ուրիշներ: Թումանյանը ավակցում էր բոլոր սկսնակներին: Նրա ավակցությունում 1910 թ. «Հասկերում» տպագրուեց Յակոբ Սառիկեանի առաջին բանաստեղծությունը<sup>8</sup>: Թումանյանը օգնություն ձեռք է մեկնել նաև Գ. Մեսեանին եւ Պահարէին (Հայկ Պետրոսեանին), ընդ որում, ոչ միայն նրանց ստեղծագործությունների տպագրություն հարցում: Նա փորձում էր ինչպէս բարոյական, այնպէս էլ նիւթական ավակցություն ցոյց տալ: Պահարէին, օրինակ, հրաւիրում է «Լուսաբերի» գրասենեակում աշխատելու: Շատերը նրան մեղադրում էին, թէ շատ լայն է գրականությունից դուրս բացում սկսնակների առջև:

Թումանյանի բարեացակամ, բարեկամական վերաբերմունքը սկսնակների նկատմամբ նրան այնքան սիրելի էր դարձրել բոլոր սկսնակների համար, որ նրանք չէին հեռանում բանաստեղծից, նոյնիսկ «դուրս չէին գալիս նրա տանից» (ԹԺՀ, 622):

Պահարէն ժամանակի բոլոր սկսնակ գրողների անունից հաւաստիացնում է. «Ձեւ՝ յիշում մի այլ գրող, որն այնպիսի բարեկամական վերաբերմունք ունենար դէպի երիտասարդ, սկսնակ գրողները, քան Յովհաննէս Թումանյանը: ...Ուշադիր վերաբերմունքը դէպի ամեն մի սկսնակ ու ծայր աստիճանի համբերատարութիւնը Յովհ. Թումանյանի առանձնայատկութիւններն էին» (ԹԺՀ, 672):

Սակայն չպէտք է կարծել, որ Թումանյանը՝ որպէս խմբագիր, բաւական խտապահանջ չէր, որ նա «Հասկերի» կամ «Լուսաբերի» դուրսը բաց էր անում անխտիր բոլորի մանկական գործերի համար: Յաճախ նրա միջամտությունը դուրս էին մընում ներկայացուած ստեղծագործությունները, կամ էլ դրանց մեծ հատուածները. «Ձեզաւ, է՛, ա՛յ, էս չելաւ, էս կտորը խանգարում է, համը փախցնում է» (ԹԺՀ, 533): Ի դէպ, Թումանյանը փորձում էր միջամտել նաև ամսագրի գեղարուեստական ձեւաւորմանը. «Այ, եթէ նկարն աւելի փոքր լինէր ու սիրուն, նաշակով բան դուրս կը գար, թէ չէ, էս ի՞նչ է...» (ԹԺՀ, 533):

<sup>8</sup> ԷՌՈՒԱՐԻ ԶՐԲԱՇԵԱՆ, Փաստերի հետեւերով. գրականագիտական նութեր, Եր., 2001, էջ 288:

Միմակ Տէր-Սահակեանը, նկատի ունենալով «Հասկերի» խմբագրական այն ժողովները, որոնց մասնակցել է Թումանեանը, գրում է, որ դրանք «մի տեսակ դասեր էին մեզ համար, ու ոչ միայն նա, այլև Խնկոն, Աղաբարը, Մեսեանը եւ ուրիշներ շատ քան էին սովորում մեծ քանաստեղծից» (ԹԺՀ, 534):

Նոյն յուշագրի հաւաստիացմամբ՝ թէև Թումանեանը «Հասկերի» խմբագրատանը յաճախ էր լինում, բայց ոչ բոլոր ժողովներին էր մասնակցում, իսկ երբ գալիս էր, բոլորն ուրախանում էին՝ «ոչ միայն նրա համար, որ անպատեառ ամէն անգամ որևէ սրամիտ առակ էր պատմում այս կամ այն գրուածքի (որ կարդում էինք ժողովում) առնչութեամբ, ոչ միայն նրա համար, որ նրա ներկայութեամբ շատ կենդանի ու զուարթ էր անցնում ժողովը, ոչ միայն նրա համար, որ ամէնքս ընդունում էինք նրա հեղինակութիւնն ու հաւատում նրա ճաշակին, այլև նրա համար, որ շատ տեղին նկատողութիւններ էր անում մեր գրուածքների մասին, խորհուրդներ տալիս եւ սովորեցնում, թէ ինչպէս պէտք է մշակել մեր գրած ոտանաւորը, պատմուածքը եւ այլն» (ԹԺՀ, 533):

Խմբագրական ժողովների այդ քննարկումներում Թումանեանը իրեն այնքան բնորոշ հումորով ու սրամտութեամբ, որեւէ գրողի սողերն ու բառերը զուգորդելով, ծիծաղաշարժ բառախաղեր էր կազմում: Ահա թէ ինչու մանկագիր Յակոբ Աղաբարը իր ստեղծագործութիւնները «աւելի վստահ ու համարձակ» պաշտպանում էր միշտ Թումանեանի բացակայութեամբ: Նման դէպքերում Ա.Թ. Խնկոյեանը սպառնում էր, թէ յաջորդ անգամ «այդ ոտանաւորդ Թումանեանի ներկայութեամբ նորից կը կարդանք» (ԹԺՀ, 533): «Հասկերի» խմբագրական ժողովների մասին մի այլ հաղորդում հանդիպում ենք Մարգար Աւետիսեանի յուշերում: Ժամանակի գրականութիւնն ու մամուլը ողորուած էր ողբով ու հառաչանքներով: Լրագրերի, ամսագրերի խմբագրութիւնները հեղեղուած էին գաղթականների թշուառ կեանքը պատկերող աղքատութեան, սովի, գործազրկութեան մասին անթիւնահամար նիւթերով: «Հասկերում» նոյնպէս տպագրում էին այդ կարգի ստեղծագործութիւններ, իսկ «99 տոկոսը զամբիւղ էր նետում - այնքան նման էին դրանք միմեանց՝ իրենց տրիտուր րովանդակութեամբ, մոայլ նկարագրութիւններով, ողբով, յուսահատութեամբ» (ԹԺՀ, 188): Ամէնից շատ Թումանեանի «թեթև ձեռքով» էին գամբիւղ նետուած ախուր, մոայլ բովանդակութեան մանկական գործերը: Բանաստեղծի հոգին մըշտապէս ընդզգել է թէկուզ իրական, բայց այն տիրութեան ու վշտի դէմ, որի մէջ լուսոյ գէթ թոյլ մի շող չի առկայծել: Նա,

ուրախութիւնը համարելով մարդու համար ամենադժուար հասանելի զգացումներից մէկը, կեանքի տիրութեան մէջ միշտ փորձում էր ուրախութիւն գտնել՝ վստահ, որ այն նոյնպէս միշտ կայ, պարզապէս թաքնուած է: Այս հարցում Թումանեանը ուշագիւր էր յատկապէս, երբ խօսքը վերաբերում էր մանուկներին: Նրա համար սկզբունք, համոզմունք ու հաւատամք էր՝ տխուր բովանդակութեամբ նկլթերից մանկական ամսագրում հնարաւորինս խուսափել:

Թումանեանի «Ուրախ գիշեր» պատմուածքում ուրախ գիշեր անց էին կացրել լամպի աղօտ լոյսի տակ հաւաքուած, սրից ու հրից փախած գաղթականները: Նկատի ունենալով իրենց թըշուառութիւնը մի պահ մոռացած, գուարճութեանը անձնատուր եղած իր հերոսներին՝ Թումանեանը «իբ անուշ Ժպիտով» ժողովականների մօտ պատմուածքը բարձրաձայն կարդալուց յետոյ աւելացրել է. «Թշուառ մարդիկ էլ իրենց ուրախութիւնն ունեն. մենք էդ ուրախութիւնը չենք տեսնում, էդ ուրախութիւնն էլ պիտի փնտրենք, տանք» (ԹԺՀ, 189):

Խմբագրական յանձնաժողովի նիստերը յաճախ տեղի էին ունենում Ստեփան Լիսիցեանի տանը, որոնց մասնակցում էին նաեւ նրա կինը՝ Կատարինէն եւ նրանց աւագ զաւակները՝ Սըրբուհին եւ Լեւոնը: Այդ ժողովներին Թումանեանը յաճախ էր բերում իր աւարտած եւ նոյնիսկ անաւարտ երկերը եւ կարդում դրանք: 1907 թ. տարեսկզբի խմբագրական ժողովներից մէկում Թումանեանը կարդացել է «Գիբորը»: Սըրբուհի եւ Լեւոն Լիսիցեանները արտասուելով խնդրում, առաջարկում ու նաեւ պահանջում են փոխել Գիբորի ճակատագիրը, առողջացնել նրան հիւանդանոցում: Սակայն թէ՛ Լիսիցեանը, թէ՛ խմբագրական յանձնաժողովի անդամները համոզուած էին, որ հէնց Գիբորի այդպիսի վախճանն է պատմուածքը դարձնում առաւել ազդեցիկ եւ յուզիչ:

«Հասկերի» խմբագրատանը Թումանեանը յաճախ էր բարձրաձայնում մանկական գրականութեան զարգացման հետ կապուած իր մտահոգութիւնները: Ազատ Մանուկեանի բնորոշմամբ, «Հասկերի» «ընտանիքում» Թումանեանը վարսենիկ Աղայեանին ասել է. «...Մանուկների աշխարհով ապրելը շատ է լաւ: Մանկական գրողներ քիչ ունենք, շատ քիչ ենք մտածում էդ ուղղութեամբ. հեղեւն էլ, մէկ-մէկ, ասես թէ խաթրի համար ենք մեր գրուածքները համեցեք անում էդ մեր կեանքի ծաղիկներին» (ԹԺՀ, 657):

9

Տէս «Голос Армении», Е., 2008, 20 ноября.

Լինելով չափազանց ուշագիր մանուկ ընթերցողի նկատմամբ, ցանկանալով ոչ միայն դաստիարակել ու բարձրացնել նրա գեղարուեստական ճաշակը, այլև հաշուի առնել արդէն ձեւաւորուածը՝ բանաստեղծը իր մանկական գրուածքները դասեր՝ Նուարդ Թումանեանի վկայութեամբ, «գրելուց յետոյ ամէն անգամ» երկխաներին հաւաքում էր իր սենեակը, կարդում, ամէն մէկից կարծիք հարցնում, ընդհանուր տպաւորութիւնն իմանում, յետոյ ուղարկում էր «Հասկերին»<sup>10</sup>: Ակամայից բանաստեղծը իր երեխաներին ներգրաւում էր «Հասկերի» աշխատանքներում: Թիֆլիսից հեռու գտնուելիս, յաճախ նրանց միջոցով էր պահպանում կապը Ստ. Լիսիցեանի հետ:

Նուարդ Թումանեանի՝ Թիֆլիսից Դսեղ ուղարկած 1906 թ. փետրուարի 15-ի նամակում կարդում ենք. «Ս. Լիսիցեանը ասաց, որ «Հասկերի» համար քան ուղարկես»<sup>11</sup>:

Բանաստեղծի երկրորդ որդու՝ Արտաւազգի արձակ գործերից մի քանիսը 1907-1911 թթ. տպագրուած են «Հասկեր» ամսագրում, այդ թւում նաեւ որոշ անեկղոտներ: Գրողի 13-14-ամեայ որդին ստորագրում էր «Կոտրած գղալ», «Քաջ Արտաւազգ» եւ այլ անուանումներով:

«Հասկերը» հարստացրեց հայ մանկական գրականութիւնը Թումանեանի շուրջ չորս տասնեակ ստեղծագործութիւններով: Առաջին անգամ այստեղ տպագրուեցին Թումանեանի ծօտ տասը չափածոյ գործեր՝ բանաստեղծութիւններ ու յեգեներներ, ժողովրդական ակունքներ ունեցող ռոմանտիկներ: Քիչ չէին նաեւ թարգմանութիւններն ու փոխադրութիւնները: Այս ստեղծագործութիւնները գրաւում էին ոչ միայն մանուկներին: Գնալով Թումանեանը շատ աւելի յայտնի էր դառնում, մեծանում էր նրա փառքը:

1911 թ. փետրուարի վերջերին (մինչեւ մարտի 2-ը) տեղի է ունենում «Հասկերի» հինգամեայ գործունէութեանը նուիրուած բազմամարդ ժողով, որը նախագահում է Յովհ. Թումանեանը: Բոլոր մասնակիցների առաջադրած հարցադրումներում իր կարեւորութեամբ եւ ծրագրային հնչողութեամբ առանձնանում են Թումանեանի ելոյթները: Ընդ որում, այդ ժողովի ընթացքում նա ելոյթ է ունենում մի քանի անգամ ցանկանալով աշխոյժ քըննարկման աւարկայ դարձնել մանկական գրականութեան հրատարակութեան եւ դրա կենսական նշանակութեանը վերաբերող բազ-

<sup>10</sup> ՆՈՒԱՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆ, Յուշեր եւ գրոյցներ, Ե., 1987, էջ 78: Այսուհետեւ 22, էջը տեքստում:

<sup>11</sup> ՏԵՆ ԻՄԱ. ՍՍՏՐԱՋԲԵԿԵԱՆ, Թումանեանի ընտանիքի նամակակիցն, Եր., 2002, էջ 14:

մազան խնդիրներ: Ժողովի քարտուղար Յ. Աղարարի հաղորդման մէջ նշուած էր. «Նախագահը մի քանի խօսքով պարզաբանեց տիկ. Լիսիցեանի յարուցած խնդիրները եւ ցանկացաւ իմանալ ժողովականների կարծիքը, թէ ի՞նչ ձեւով կը կամենային մօտենալ հրապարակ եկած հարցին»<sup>12</sup>:

Որոշ մանկավարժներ բարձրացնում են այն հարցը, թէ ամագրում ստեղծագործութիւնները տպագրելիս պէտք է նկատի ունենալ որոշակի տարիքի մանուկ ընթերցողի: Թումանեանը առարկում է այդ կարծիքներին՝ ասելով. «Մենք չենք կարող «Հասկերը» մասնաւորել յատկապէս էս կամ էն հասակի մանուկների համար: Առաջին պատեառը, որ առանց էն էլ հրատարակելով ամէն հասակի մանուկների համար, իսկի չենք ստանում քաւարար թուով բաժանորդներ, ուր մնաց սահմանափակուելից որոշ տարիքի համար» (6, 538):

Սակայն բաժանորդների թիւը Թումանեանի անհամաձայնութեան միակ պատճառը չէր: Որքան էլ Թումանեան-մանկագրի գործերում առանձնացուեն տարիքային տարբեր խմբերին ուղղուած ստեղծագործութիւններ, միեւնոյն է հեղինակը ինքը երբեք չի ձգտել այդպիսի նպատակի. գուցէ այդ պատճառով է նաեւ, որ բանաստեղծի մանկական երկերը հաւասարապէս սիրելի են նաեւ հասուն ընթերցողի համար: Թումանեանը իր ելոյթի մէջ ասում է. «Մենք չենք կարող գրողներին պատուիրել, թէ գրեցէ՛ք էսքան կամ էնքան տարեկան երեխի համար: Ես ինքս գրող եմ, մանկական գրուածքներ գրելիս երբեք չեմ մտածում, թէ քանի տարեկանի համար է նա: Քանի տարեկանն ուզում է, թող կարդայ, ինչ հասակի համար կը լինի, թող նրան տան: Բոլոր հասակներին յարմար կը լինի, աւելի լաւ: Չենք կարող սահմանաւորել» (6, 538):

Ստ. Լիսիցեանը ձեռնարկում է «Լուսարբեր» դասագրքի հրատարակութիւնը եւ հրաւիրում է Լեւոն Շանթին ու Յովհաննէս Թումանեանին, համագործակցելու: 1907 թ. ապրիլի 22-ին բանաստեղծը նոր էր վերադարձել Բաթումից, ուր գնացել էր մի կողմից թուրքերի ու վրացիների, միւս կողմից թուրքերի ու հայերի ազգամիջեան բախումները դադարեցնելու նպատակով: Թումանեանը ընկերոջը՝ Փիլիպոս Վարդապարեանին, թիֆլիսից գրում է. «Նրեւակայի՛ր, էս դալմադալի մէջ Լիսիցեանը, Շանթն ու ես էլ դասագիրք ենք կազմում» (10, 23):

Թումանեանին արուած Լիսիցեանի առաջարկը ամենեւին պատահական չէր: «Հասկերը», որը հրատարակուած էր նաեւ Լի-

<sup>12</sup> «Հորիզոն», 1911, մարտի 3, թիւ 45:

սիցեանի անձնական միջոցներով, մեծ չափով բաժանորդներ ունեցաւ եւ բարձր վարկանիշ ապահովեց Թումանեանի շնորհիւ:

Ինչպէս իւրաքանչիւր գործ, դասագրքի հետ կապուած աշխատանքները Թումանեանը անում էր մեծ եռանդով ու ողբերութեամբ: «Լուսաբերի» աշխատանքները աւելի ակտիւանում էին հիմնականում ամռան ընթացքում, մեծ մասամբ Մանգլիսի ամառանոցում, որը պարբերաբար վարձում էին Լիւիցեանները: Վստահ էր, որ մանկանը պէտք է հոգեւոր մնունդ տայ, որպէսզի նա «միշտ անի ու զարգանայ: Եւ անա եկնց էստեղ էլ հարց է առաջ գալիս՝ ի՞նչ սնունդ տալ եւ ի՞նչ ձնով» (7, 207): Հէնց այս գիտակցութիւնն էլ ստիպում է բանաստեղծին ջանք ու եռանդ չինայել:

«Լուսաբեր Ա տարին» յոյս է տեսնում 1907 թ. օգոստոսի վերջին կամ սեպտեմբերին, սակայն նրա նախապատրաստական շրջանում արդէն առաջացել էր մեծ հետաքրքրութիւն, որն, անշուշտ, պայմանաւորուած էր հեղինակների հանրաճանաչութեամբ: «Մովթարայա» երգիծական շարաթաթերթը մի գունաւոր ծաղրանկարում պատկերել էր Թումանեանին, Շանթին եւ Լիւիցեանին, որոնք կրակի վրայ գրուած «Լուսաբեր» անունով կաթսայի շուրջը հաւաքուած հարսաւ էին եփում: Շանթը թէժացնում էր կրակը, Լիւիցեանը խոնոնում էր կաթսայի պարունակութիւնը՝ աւելացնելով «Լուսաբերի» համարները, իսկ Թումանեանը աղն էր ցանում: Բոլորի համար պարզ էր, որ մայրենի լեզուի դասագրքի շունչն ու ոգին, աղն ու համը Թումանեանն էր լինելու<sup>13</sup>:

Ընդունելով Լիւիցեանի՝ դասագրքեր կազմելու առաջարկը՝ Թումանեանը յոյս ունէր, որ դրանով գէթ մի փոքր կը թեթեւացնէր բնաանիքի հոգսը: 1908 թ. յուլիսի 2-ին նա գրում է Աւ. Իսահակեանին. «Լուսաբերով» եմ զբաղուած: Մինչեւ յուլիսի վերջը հազիւ թէ ազատում եմ տպագրութիւնից: Դատել եմ ոտանաւոր շինող, պատմութիւն շինող-փէշախար: Ի՞նչ անենք, զուցէ սրանից էլա մի բան դուրս գայ: Չմնանք ազգի ու յոբելանի մուկնաթին» (10, 42):

Չնայած Թումանեանը «Լուսաբերի» համար գրում էր ինքնուրոյն եւ թարգմանական, չափածոյ եւ արձակ երկեր, սակայն զբաղուած էր նաեւ ամսագրի հրատարակութեան, տպագրութեան ամենատարբեր խնդիրներով, ինչը նրան հեռացնում էր այնքան ցանկալի, բաղձալի ստեղծագործական աշխատանքից: Նոյնը վերաբերում է նաեւ Շանթին, որը գրողի՝ այլ աշխատանքով զբա-

<sup>13</sup> Տե՛ս «Խարարայա», Թիֆլիս, 1907, թիւ 31:

դուելը, նրան ստեղծագործական աշխատանքից շեղելը ազգի մը-  
շակոյթի զարգացման համար անուանում էր բարբարոսութիւն:  
Լոգանից 1913 թ. յունուարին Թումանեանին հասցեագրած նա-  
մակում Շանթը գրում է. «Բոլորը Ստեփանի մեղքն է: Ինձի ու  
Բեգի այն տեսակ գործի մը լծեց, որուն տակը մտնելը կայ,  
դուրս ելնելը չի կայ: Վերջապէս ինձի<sup>14</sup> ինչ. տուժողը հայոց  
ազգը: Այդ երանելի ազգը այս ու այլ կարգի բարբարոսու-  
թիւններու ենթարկուել է արդէն եւ «ողջամբ» տակէն դուրս  
եկեր»<sup>14</sup>:

Սակայն պէտք է նշել, որ «Լուսաբերը», իրօք, որոշ չափով  
թեթեւացրեց Թումանեանի ընտանեկան ծանր հոգսերը: Ինչպէս  
վկայում է իշխանուհի Մարիամ Թումանեանը այդ շրջանում, չը-  
նայած Թումանեանը աշխատակցում էր «Հասկերին», իմբա-  
զրում էր «Հորիզոնը», բայց «ամէնից եկամտաբերը «Լուսաբեր»  
դասագրքի հրատարակութիւնն էր» (ԹժՀ, 483):

Ստեփան Լիսիցեանը եւ նրա «Լուսաբերը» կարողանում էին  
ստիպել Թումանեանին, որ առանց իր երկերի նկատմամբ ունե-  
ցած մեծ բծախնդրութեան նոր ստեղծագործութիւններ բերի  
դասագրքի համար: Մանաւանդ արձակ երկերը, Հէքիաթներն ու  
պատմուածքները Թումանեանը գրեց յատկապէս «Լուսաբերի»  
համար:

Սկզբնական շրջանում դասագրքի հրատարակութեան հա-  
մար նրեթական միջոցները չէին բաւարարում: 1907 թ. ամռանը  
Թումանեանը հովանաւորներ է փնտրում: Յուլիսի 27-ին նա դի-  
մում է 1906 թուականից Բաքուի Հայոց հրատարակչական ընկե-  
րութեան յանձնաժողովի անդամ Յովհ. Քաջազնունուն՝ ինդերլով  
նրանից ֆինանսապէս անձամբ իրեն օգնելու փոխարէն ապահո-  
վել «Լուսաբեր» դասագրքի հրատարակութիւնը:

Թումանեանի այդ նամակն անյայտ է, սակայն նրա բովան-  
դակութիւնը արտայայտուած է պատասխան նամակում, որտեղ  
Քաջազնունին ստիպուած էր մերժել բանաստեղծին՝ արդարանա-  
լով, թէ գումարը «մեզ յանձնուած է փոքր պատրաստի գրքեր  
տպագրելու համար եւ ուրիշ ոչինչ»<sup>15</sup> (ՈւՀ 4, 382): Սակայն  
Քաջազնունուն դիմողը անձամբ Թումանեանն էր, եւ նա փորձեր  
է անում ընդառաջ գնալ բանաստեղծին: Սակայն օգոստոսի 20-ին  
Բաքուի հրատարակչական ընկերութեան մասնաժողովի նիստը  
մերժում է «Լուսաբերին» աջակցութիւն ցոյց տալը: Հետագա-

<sup>14</sup> ԹՈՒՄԱՆԵԱՆ, Ռուսախոսութիւններ եւ հրապարակումներ, հ. 4, Ե.,  
1985, էջ 383: Այսուհետեւ ՈւՀ, էջը՝ տեքստում:

<sup>15</sup> ԳԱԹ, ԹՅ, թիւ 1189:

յում, երբ Թումանյանը նախագահում էր տարբեր ընկերությունների, ինքն էր նիւթական յատկացումներ անում «Լուսաբերի» օգտին: Բանաստեղծի 1920 թ. ծոցատետրում հանդիպում ենք հետևեալ գրությունը. «Լիսիցեանի մօտ «Լուսաբերին» - 1000 ո.» (Ուշ 5, 279):

Դասագիրքը դեռևս դպրոց էր մտել, երբ տպագրութեան լուրը մեծ խանդավառութիւն առաջացրեց նոյնիսկ գաւառներում:

1908 թ. «Լուսաբեր Ա-ն» արդէն լոյս էր տեսել, իսկ «Լուսաբեր Բ-ն» ուղարկուել էր տպարան: 1908 թ. ամռան շոգերին Թումանյանը ստիպուած էր աւելի երկար մնալ Թիֆլիսում: Քաղաքում մնալու պատճառներից մէկը «Լուսաբերի» տպագրութիւնը վերահսկելն էր: Մէկ անգամ չէ, որ Թումանյանը ամառային հանդիսոր գտնում էր «Լուսաբերի» համար:

Ստեփան Լիսիցեանի դստեր՝ Նագելիի հետ գրոյցի ընթացքում բանաստեղծի կինը Օլգան ասել է, որ եթէ Ստ. Լիսիցեանը այդքան պահանջկոտ չլինէր, ապա Թումանյանի շատ մանկական գործեր անաւարտ կը մնային: Բազմազբաղ եւ իր ստեղծագործութեան որակի հանդէպ բծախնդիր բանաստեղծը յաճախ էր ուշացնում ամսագրի հերթական համարի կամ դասագրքի տըպագրութիւնը՝ ժամանակ չգտնելով գործը աւարտին հասցնելու համար: Նման դէպքերում Ստեփան Լիսիցեանը որդուն՝ Լեւոնին, կամ իր տանը բնակուող ամսագրի աշխատակցին ուղարկում էր Թումանյանի տուն եւ պարտաւորեցնում դուրս չգալ այնտեղից մինչեւ բանաստեղծից շտանային խոստացած ստեղծագործութեան ձեռագրերը: Նագելի Լիսիցեանի վկայութեամբ, այդպիսի դէպքերում Թումանյանը ստիպուած էր լինում փակուել իր աշխատասենեակում եւ աւարտին հասցնել գեղարուեստական ստեղծագործութիւնը կամ թարգմանութիւնը:

«Լուսաբերը» նախատեսուած էր 4-5 տարբեր դասարանների համար եւ տպագրուում էր որպէս Ա տարի, Բ տարի եւ այլն: Հրատարակութեան առաջին տարիներից վերահրատարակուում էր կոչուելով Բ, Գ, տպագրութիւն եւ այլն:

Թումանյանի, Լիսիցեանի եւ Շանթի հեղինակութեամբ 1908 թ. ուսումնական տարուայ սկզբին արդէն հրատարակուել էր «Լուսաբեր Բ» տարին, որը նախատեսուած էր յաջորդ՝ երկրորդ դասարանի համար: Գրքի հէնց սկզբում նշուած էր, որ այն «ընդունուած է որպէս դասագիրք պետական դպրոցների համար»: Դասագիրքը դարձեալ բացուում էր Թումանյանի «Լուսաբացին» բանաստեղծութեամբ՝ լույս իրբեւ կրթութեան, լու-

<sup>16</sup> Տէ՛ս «Голос Армении». Е., 2008, 20 ноября.

աստիճանի խորհրդանիշ ներկայացնելու խորհրդով: Այստեղ նոյնպէս տեղ են գտել դժուար բառերի բացատրութիւններ, հանելուկներ, առածներ, սակայն ի տարբերութիւն նախորդ գրքի՝ վերջում գետեղուած էին այդ հանելուկների պատասխանները<sup>17</sup>: Առածներից կարելի է յիշատակել «Ամէն բան իր տեղն ունի», «Լաւութիւն արա՛ ջուրը գցի, ձուկը չիմանայ, Աստուած կ'իմանայ», «Պարծեցողը պարկը մտնի» եւ այլն:

Մինչ «Լուսաբերի» առաջին երեք տարիները վերահրատարակուած էին, Թիֆլիսում 1913 թ. լոյս է տեսնում նաեւ դասագրքի չորրորդ տարին՝ «Լուսաբեր Դ տարի», որում յատուկ նշուած էր, որ դասագրքերը «Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կողմից քոլլատրուած են որպէս դասագիրք պետական դպրոցների համար»<sup>18</sup>: Գրքի նկարագրողումը ներկայացնում էր հայ ժողովրդի գոյութիւնը խորհրդանշող Արարատ լեռան նկարը եւ սկսուած էր Յովհ. Յովհաննիսեանի «Գիւղի ժամը» բանաստեղծութեամբ: Չորրորդ դասարանի երեխաները ծանօթանում էին Խ. Աբովեանի կեանքի պատմութեանը մինչ Դորպատ ուղեւորուելը:

«Լուսաբերի» հէնց առաջին գիրքը մեծ պահանջարկ է ունենում եւ վերահրատարակումը դառնում է անխուսափելի: 1908 թ. արդէն լոյս են տեսնում գրախօսականներ, ինչպէս օրինակ Ա. Նազարէթեանի «Լիւիցեան Ստ. եւ Թումանեան Յովհ. Լուսաբեր Ա տարի: Այբբենարան եւ առաջին ընթերցարան»<sup>19</sup> եւ Նիկոլ Աղբալեանի գրախօսականները<sup>20</sup>:

Ն. Աղբալեանը մատնանշում է «Լուսաբերի» մի շարք արժանիքներ՝ լեզուն, ազգային եւ ժողովրդային ոգին, նիւթերի ընտրութիւնը, մանկավարժական եւ գեղարուեստական արժէքը: «Զը-

<sup>17</sup> «Լուսաբեր» Ա տարի, Թիֆլիս, 1907 թ.:

<sup>18</sup> Այդ հանելուկները վերաբերում էին կրթութեան, գրականութեան անհրաժեշտութեանը, բնութեան տարբեր երեւոյթներին, շրջապատող իրերին, ինչպէս օրինակ «էն ի՛նչն է, ինչը՝ Սպիտակ դաշտ, սեւ սերմեր, ձեռքով ցանեմ, աչքով հնձեմ» (գիր ու թուղթ, էջ 11), «Գորգը թափ տալ չի լինի, ոսկին համբել չի լինի» (երկինք եւ աստղեր, էջ 15), «էս կողմը դար, էն կողմը դար, մէջն անդադար» (Գետ ու ափեր, էջ 41), «Զին պնաց՝ թամբը մնաց» (Գետ ու կամուրջ, էջ 41), «Վերը ծակ, ներքեւը ծակ, մէջը լիքը ջուր ու կրակ» (Մամուլար, էջ 21), «Պոչը ջրում, գլուխը կրակում» (Պատրոյգ, էջ 65), «Մի մարագ, մէջը լիքը ուրագ» (Բերան եւ աստմներ, էջ 21): Տե՛ս «Լուսաբեր», Բ տարի, 1908 թ.:

<sup>19</sup> «Լուսաբեր, Դ տարի», Թիֆլիս, 1913:

<sup>20</sup> «Մշակ», Թիֆլիս, 1908, օգոստոսի 27, թիւ 187, էջ 3:

կայ ոչ մի աղօթք, ոչ մի նախապաշարում, - գրում է քննադատը: - Մանուկը դիտում է իբրև բնութեան մի ծաղիկ, որի վրայ պետք է գուրգուրալ եւ պահել մեղմ լոյսի մէջ»<sup>21</sup>:

*Նիկոլ Աղբաթեանը փաստէցնում է, որ «Լուսաբերը» մեծ ապագայ ունի... Երանով կարելի է աւանդել մաքուր եւ հարագատ հայ լեզու, դասը սովորեցնել խաղ ու պարով, վառել հետաքրքրութիւնը եւ կրթել նրա զգացումներն ու նաշակը»<sup>22</sup>:*

*Նոյն կարծիքին էր նաեւ Թումանեանը, թէ՛ եւ իբրև դասագրքի հեղինակ չէր բարձրաձայնում: 1907 թ. յունիսի 3-ին Մանգլիսից կնոջն ուղղած Թումանեանի նամակում կարդում ենք. «Բայց անկասկած եղած դասագրքերից ամենալաւն է» (10, 26): Նոյնը վկայում է նաեւ մէկ այլ ստիժով. «Ուրախ եմ, ի հարկէ, այս տարուայ «Լուսաբերի» յաջողութեանը. հրապարակը ամէն տեսակէտից անտարակոյս մերն է» (ՈւՀ 4, 380):*

*«Լուսաբեր» դասագրքի մասին գրախօսականների առատութեամբ աչքի է ընկնում «Հովիւ» ամսագիրը: Ծաւալուն մի քանի յօդուածներով հանդէս է գալիս Սեդրակ Մանգլիսեանը, որը մատնանշում է ոչ միայն գրքի արժանիքները, այլևս որոշ թերութիւններ՝ կատարելով «հարեւանցի կարեւոր նկատողութիւններ»: Նա նոյնպէս արձանագրում է փաստը, որ «Լուսաբերը» ըստ արժանոյն մեծ ընդունելութիւն գտաւ: Բարեփոխութիւնները վկայում են, որ հեղինակները ջանք չեն խնայում, որպէսզի գիրքը կատարելութեան կերպարանք ստանայ»<sup>23</sup>: Նա առանձնացնում է տառերը սովորեցնելու՝ այբբենարանի մասը եւ ընթերցարանը: Առաջին մասը համարում է «չուրք ձգած աշխատութիւն», քանի որ «նոր համփայ բանալու տնկելով» բռնուած հեղինակները «խարխափում են» եւ հնչական մեթոդը կատարելագործելու փոխարէն միշտ «նոյն կախարհուած շրջանում են մնում», թէ՛ եւ «Լուսաբեր Ա»-ի երկրորդ հրատարակութեան մէջ նկատում է գրական փոփոխութիւններ: «Գովում եմ, որ անցեալ տարուայ մի քանի քերութիւնները նոքա այժմ ջնջել են»<sup>24</sup>:*

*Սեդրակ Մանգլիսեանը, որի դասագիրքը մրցակցութիւնից գուր էր մնացել, ընդունում է «Լուսաբերի» առաւելութիւնները:*

21 «Զանգ», Թիֆլիս, 1908, թիւ 9, յունիսի 16:

22 Ղ. Ա.Ղ.Ա.ՅԵԱՆ, «Ուսումն մայրենի լեզուի», Երկրորդ գիրք, էջ 76:

23 «Հովիւ», Թիֆլիս, 1908, թիւ 28, էջ 444:

24 Նոյն տեղում, էջ 445:

րը: Նա մասնաւորապէս նշում է, որ «*Լուսաբերի*» րովանդակութիւնը մանկական է, գուարեալի է, լեզուն - ընտիր»<sup>25</sup>:

«*Հովիւ*» ամսագրում 1908 թ. թիւ 3-ի խմբագրականում ասում էր. «Վերջերս լոյս տեսած դասագրքերի մէջ մի գեղեցիկ րացատութիւն է կազմում պ. Ս. Լիսիցեանի, Թումանեանի, Շանթի կազմած մայրենի լեզուի պատկերազարդ այբբենարանը՝ «*Լուսաբեր*»: Բովանդակութեան կողմից այն ինքնուրոյն է, հետաքրքիր եւ րազմակողմանի»<sup>26</sup>:

Չորս տարի շարունակ ազմկոտ «Դաշնակցական գործով» իբրեւ մեղադրեալ հետապնդուելով՝ Թումանեանը չէր զազարում գրադուել ինչպէս գրական-հասարակական գործունէութեամբ, այնպէս էլ «*Լուսաբերով*»:

Արեւմտահայերը ցանկութիւն էին յայտնել արեւելահայերէնը արեւմտահայերէնի վերածելով՝ «*Լուսաբեր*» դասագիրքը յարմարեցնել պոլսահայ դպրոցների համար: Զազարոս Աղայեանը նոյնպէս մտադիր է եղել իր դասագիրքը թարգմանել արեւմտահայերէն: Ս. Մանդինեանը գրում է. «Արեւելեան Աղայեանը արեւմտեան Պարոնեանի րարառով իստող... Այս կը լինի մի գաւեշտ՝ հագին շորերի փոփոխութիւններով»:

Արդ՝ չլինի<sup>27</sup> թէ «*Լուսաբերն*» էլ հրապուրուի այդպիսի գեղեցիկ... գաղափարից: Այդ քայլը եւ կը համարէի մեծ թըշմախութիւն տանկահայերի ազատօրէն գարգացման դէմ - Timeo Danaos et dona ferentes»<sup>27</sup>:

1909 թ. ամսանը Թումանեանը Շանթի հետ միասին սկըսում է այդ աշխատանքները: 1909 թ. օգոստոսի 15-ին գրում է. «Արդէն ձեռնարկում եմ «*Լուսաբեր*» դարձնելու եւ տանկահայոց դասագիրք» (10, 85): Ի հարկէ, Պոլսում դասագրքի հրատարակութիւնների հարցում աւելի մեծ էր Շանթի դերը, որովհետեւ այն պէտք է ամբողջութեամբ վերածուէր արեւմտահայերէնի: 1913 թ. յունուարին Շանթը Թումանեանին գրում է. «Եւ կ'աշխատեմ առայժմ մեր «*Լուսաբերի*» ցովերուն տակը եւ, այդ այգածին լոյսի ցովերէն գուրկ չը պահելու համար համայն Թուրքիոյ մատաղ սերունդն եւ անոնց դաստիարակիչները, նստեր գրեր եմ... ամբողջ հատոր մը» (ՈւՀ 4, 383):

Չնայած հիմնականում Շանթին էր պատրաստել արեւմտահայութեան համար «*Լուսաբերը*», սակայն անմասն չէր նաեւ

<sup>25</sup> «*Հովիւ*», Թիֆլիս, 1908, թիւ 31, էջ 491:

<sup>26</sup> Նոյն տեղում, թիւ 3, էջ 47:

<sup>27</sup> «*Հովիւ*», Թիֆլիս, 1908, թիւ 31, էջ 492:

Թումանյանը: 1911 թ. յունուարին արտասահմանից դասադիրքը ուղարկելով բանաստեղծին՝ Լիսիցեանը նրան յանձնարարել էր շտապ ծանօթանալ եւ դիտողութիւնները ուղարկել Պոլիս Շանթին<sup>28</sup>: Թումանյանը պատասխանատուութեան մեծ զգացումով կատարում է խմբագրի յանձնարարականը. «Երկու անգամ նայեցի, մին նայեցի, մին էլ մի բանի օրից յետոյ: Ճշմարիտն ասեմ, ուզում էի աւելի շատ փոփոխութիւններ անեմ» (10, 119):

Արեւմտահայերի համար «Լուսաբերի» այրբենարանը եւ Ա տարին իրականացուել է 1911 թ. Պոլսում (10, 501): Թումանյանը աւաջինը այդ մասին տեղեկանում է Դրեզդենում գտնուող Ստ. Լիսիցեանից եւ նրա խնդրանքով յայտարարութիւն է տալիս «Հորիզոնին»: Աւելի ուշ «Լուսաբերները» գրեթէ միանգամից էին լոյս տեսնում Թիֆլիսում եւ Պոլսում, ինչպէս օրինակ 1913 թ. օգոստոսին<sup>29</sup>:

Դասագրքի բարձրորակ տպագրութիւնը պայմանաւորուած էր նրանով, որ այն իրականացուած էր ոչ միայն Թիֆլիսում: Կրկիչները պատւիրում էին արտասահմանում՝ մասնաւորապէս Վիեննայում (Ուշ 5, 357):

Այդ շրջանում Շանթը դասադիրք կազմելու աշխատանքներին մասնակցում էր Երեւանից, ուր 1908 թ. աշնանը դեռ ապրում էր հիւրանոցում եւ Տիգրան Աղամալեանի ղեկավարած դպրոցում օրական չորս ժամ պատմութիւն եւ գրականութիւն դասանողում: Թիֆլիսից հեռու գտնուելը չէր նուազեցնում Շանթի հետաքրքրութիւնը դասագրքի աշխատանքների նկատմամբ, թէեւ Թումանյանի ծանրաբեռնութիւնը՝ կապուած տպագրութեան հետ, աւելի էր մեծանում հէնց Շանթի Թիֆլիսից բացակայելու պատճառով:

Երբ «Հասկերին» գուզընթաց ասպարէզ եկաւ «Լուսաբերը», դպրոցներում գործում էին մայրենի լեզուի մի շարք դասագրքեր՝ Ղ. Աղայեանի, մանկավարժ Ս. Մանդինեանի, կենտրոնական գրավաճառանոցի հիմնադիր, մանկավարժ Նիկ. Տէր-Ղեւոնդեանի, Տ. Ռաշմաճեանի, Ա. Զիլինկարեանի («Դասընկեր») լըրագրող-հրատարակիչ, մանկավարժ Ա. Ապրեսեանի, Յ. Աղարարի, Ա. Խնկոյեանի, թարգմանիչ, մանկավարժ Յովհ. Արարաջեանի եւ այլոց հեղինակութեամբ ու աշխատակցութեամբ: Նրանց բոլորի

<sup>28</sup> ԳԱԹ, ԹՅ, ԹԻՎ 719:

<sup>29</sup> Այդ օրերին Թումանյանը գրում է. «Էս տարի Էնտեղից ամէն մէկիս մնացել է 290 ու, առաջիկայ տարին երեւի կը՝ դառնայ 600 ու, ուրեմն եկող տարուանից եւ այսինքն Էս սեպտեմբերից ամէն մէկիս հաւանական է գայ երկու հազար ուրլի» (10, 188):

դասագրքերը Ա. Մանուկեանի հաւաստիացմամբ միանգամից «...ևս մղուեցին, երբ հրապարակ եկաւ Յովի. Թումանեանի հմայիչ քանաստեղծութիւններով հարուստ «Լուսաբերը»» (ԹԺՀ, 510):

Թումանեանի եւ Աղայեանի սերտ բարեկամութիւնը հայ գրականութեան պատմութեան մէջ երկու գրողների հագուադէպ հոգեհարազատ ու անդաւաճան կապի պայծառ էջերից է: Ինչ խօսք, Աղայեանը տխրել էր իր «Ուսումն մայրենի լեզուի» դասագրքի դերի նուազեցման համար եւ մտազրուել էր այն վերամշակել ու յարմարեցնել ժամանակի մանկավարժական-մեթոդական նորագոյն պահանջներին, հարստացնել նոր նիւթերով: Մի-սթամանակ Աղայեանը չէր թերագնահատում իր կրտսեր ընկերոջ գործը: Ինչպէս վկայում են ժամանակակիցները, «նա երբեք ոչ մի անբարեացակամ դիտողութիւն չարաւ «Լուսաբերի» մասին, ինչպէս ընդունուած էր նման դէպքերում մեր դժբախտ իրականութեան մէջ... Նա միայն ասում էր.

- Առանց Յովհաննէսի նրանք չէին կարող այդպիսի դասագրքեր կազմել: Լեզուն, ոնը, գրական մշակումը, ֆուլկլորից վերցրած ու նշակով մշակած համով-հոտով նիւթերը ամբողջովին Յովհաննէսինն են: Լիսիցեանը մեթոդական աշխատանք է տարել, իսկ Շանթը լոկ թարգմանութիւններ է արել եւրոպական գրականութիւնից» (ԹԺՀ, 406):

Աղայեանին չէր չարացրել արեւելահայ դպրոցներում լայնօրէն տարածուած իր դասագրքերի գրեթէ մոռացութեան մատնուելը եւ ասպարէզից դուրս մղուելը: Աւելին, նա չէր հերքում հայ դպրոցի ու մանկավարժութեան պատմութեան մէջ նոր ատիճան նշանաւորած դասագրքի արժանիքները, մասնաւորապէս ժողովրդական ակունքներով ստեղծագործութիւնների առկայութիւնը դասագրքում եւ այդ գործում Թումանեանի անուրանալի դերը: Աղայեանը, անշուշտ, միանգամայն իրաւացի էր: Ընդ որում, Թումանեանը բանահիւսական նիւթը, ժողովրդական ստեղծագործութիւնները եւ նրանց մշակումները ներկայացնելու համար երբեմն տարածաշրջանների մէջ էր Լիսիցեանի եւ Շանթի հետ: Այսպէս, նրա առաջարկը «Մոլլա Նասրեղիւնի փափաքը» տպագրելու մասին չի ընդունւում: Մերժելով Թումանեանին՝ Լիսիցեանը վկայակոչում է կնոջը՝ Կատարինէին եւ Քափանակեանին, որոնք կարծում էին, թէ «ո՛չ մի կերպ արամբտութիւնը հասկանալի չի կարող լինել մանուկներին, եւ էլ մե՛նք՝ հայերս՝ տակտի պահանջմամբ ոչ մի ծաղրական բան չըպիտի տպե՛նք մեր մանկական գրքերի մէջ մանուկների մասին» (ՈւՀ 5, 358) (Ընդգծումը Ս. Լիսիցեանինն է - Ս. Հ.):

Անշուշտ, Թումանյանին նոյնպէս անհանգստացնում էր Ղ. Աղայեանի դասագրքի ճակատագիրը, որովհետեւ նրան միշտ էլ մտահոգել է իր սիրելի բարեկամի տնտեսական վիճակի բարելաւման խնդիրը: Մինչ «Լուսաբերի» յաղթարշաւը 1875 թուից լոյս տեսնող «Ուսումն մայրենի լեզուի» դասագիրքը նիւթական բաւական բարձր վարձատրութիւն էր ապահովում Աղայեանին:

Ստեփան Լիսիցեանը, ցանկանալով մրցակցային դաշտում յաղթողի մենաշնորհ ունենալ, Թումանյանից պահանջում է Աղայեանի դասագրքից հանել բոլոր ստեղծագործութիւնները, սակայն բանաստեղծը կտրուկ մերժում է: Այդ մասին պահպանուել է Աղայեանի դատեր՝ Լուսիկ Սարեանի 1939 թ. մայիսի 4-ի նամակը ուղղուած Նուարդ Թումանյանին, որի հեղինակը տարիների հետուից ամենայն մանրամասնութեամբ շարադրում է. «Ինչ գրում ես դրանց բարեկամութեան մասին, բայց դա մի ուրիշ տեսակ բարեկամութիւն էր, հայրը իր գաւակին այնպէս չէր սիրում, ինչպէս պապէն էր սիրում հայրիկիդ: Յիշում եմ այն օրերը, երբ հայրիկդ միացաւ Լիսիցեանի հետ «Լուսաբերի» համար, դա մի կոնկուրենցիա էր, որը սաստիկ ազդեց պապէի նիւթականի վրայ, չէ՞ որ նախանձողներ էլ կային այդ բարեկամութեանը: «Էդ էլ քո Յովհաննէսը», - ասում էին նրանք: «Թող, ոչինչ, երեխաներ շատ ունի, մեղք է, ես նրան չէի կարողանայ պահովել», - պատասխանում էր նրանց պապէն: Մի օր էլ եկաւ հայրիկդ եւ ասաց պապէին. «Լիսիցեանը պահանջում է, որ ես բոլոր գրուածքներս հանեմ քո դասագրքերից, բայց ես մերժեցի, ասացի «աւելի շուտ ես «Լուսաբերից» կը հրաժարուեմ, քան թէ էդպէս քան կ'անեմ: Պապէն գրկեց նրան, արտասուեց»<sup>30</sup>:

Իրականում, ինչպէս նկատել է Աս. Ասատրեանը մանկական գրականութեան երկու խոշոր դէմքերին զնահատելիս, Թումանյանը Աղայեանի փառքը չխլեց. «այլ ինքն էլ մանկական աշխարհի սիրելի բանաստեղծը դարձաւ՝ անցնելով Աղայեանի հարթած նախապարհով»<sup>31</sup>:

Յայտնի է, որ Թումանյանի կենսագրութեանը աւելի բնորոշ են ստեղծագործական կեանքի ընդհատումները՝ կապուած նրա ազգային-քաղաքական, հասարակական գործունէլութեան, հրատարակախօսական բնագաւառում դրսեւորած ակտիւութեան հետ:

<sup>30</sup> Նամակը Նուարդ Թումանյանի արխիւում է պահպանուում: Այն մեզ էր տրամադրել բանաստեղծի զուտոր Թամար Թումանյանը:

<sup>31</sup> Ս.Ս. ԱՍԱՏՐԵԱՆ, «Ղազարոս Աղայեան, կենսին ու գործունէութիւնը», Եր., 1940, էջ 65:

Սակայն «Հասկերն» ու «Լուսարերը» բարենպաստ դեր խաղացին նրա գեղարուեստական ժառանգութեան հարստացման գործում:

Իր ինքնակենսագրական փոքրածաւալ ակնարկում Թումանյանները գրում է, որ պատանեկութեան տարիներին՝ 10-11 տարեկան հասակում Լորիս-Մելիքովի կեանքի շուրջ յօրինուած ժողովրդական երգերին տներ էր աւելացնում եւ գրում զանազան ոտանաւորներ (6, 144): Ժողովրդական մոտիւներով նրա բանաստեղծութիւնների մեծ մասը գրուել է «Հասկերի» եւ «Լուսարերի» համար: Այդ երկերի մոտիւներն ու թեմատիկ ընդգրկումը վկայում են, թէ որքան խնամքով է բանաստեղծը ընտրութիւն կատարել ժողովրդական բանահիւսութեան զանազանից՝ հաշուի աւելնելով, որ դրանք հասցէագրուում են մանուկ ընթերցողին: Վերջինիս ներկայացում էր թէ՛ բնութիւնը՝ իր գետերով ու աղբիւրներով, երգող թռչուններով ու ծաղիկներով, եւ թէ՛ նրա մէջ ապրող մարդը՝ իր յոյզերով, խոհերով ու հոգսերով, բայց եւ անսահման բարութեամբ, եւ թէ՛ աշխարհը բոլորի համար շէն ու պայծառ տեսնելու ժողովրդական երազանքը:

Բանահիւսական ատաղձը ծառայում է սոսկ իբրեւ նիւթ իր գեղարուեստական մտայղացումները իրողութիւն դարձնելու համար:

«Հասկերի» եւ «Լուսարերի» համար Թումանյանները կատարեց մանկական երկերի մի շարք հիանալի, անզուգական թարգմանութիւններ ու փոխադրութիւններ: Այդ թարգմանութիւններն ու փոխադրութիւնները՝ կատարուած 1907-1911 թթ., Թումանյանի բազմազան ու բազմաշերտ թարգմանական ժառանգութեան մէջ ստեղծագործական աշխատանքի սկզբունքների առումով առանձին խումբ են կազմում: Բանաստեղծը օգտուել էր օտար, մեծ մասամբ ռուսերէն աղբիւրներից: Վերջիններիս հետ Թումանյանները վարուել է նոյն կերպ, ինչպէս ժողովրդական նիւթերը մշակելիս: Բնագրերից կրճատել եւ դուրս է թողել որոշ հատուածներ, աւելացրել նորերը, ստեղծագործութիւնն ու նրա ոճական հիւստուածքը անքան է հայացրել, յարմարեցրել հայ իրականութեանը, հարազատացրել մանկական հոգեբանութեանը, որ նրանք վաղուց ի վեր եւ առմիշտ դարձել են հայ գրականութեան կայացած փաստն ու անբաժան սեփականութիւնը: Կարծում ենք, կարելի է առանց որեւէ վերապահութեան պնդել, որ Թումանյանները ժողովրդական եւ օտարալեզու գրական աղբիւրները օգտագործում էր միայն միտքը, ներշնչանքը աշխուժացնելու, իսթանելու նպատակով՝ յօրինելով միանգամայն ինքնուրոյն գեղարուեստական ստեղծագործութիւններ: Խօսքը վերաբերում է «Գրիչ», «Առաջին ձիւնը», «Մարտ», «Ծաղիկները», «Փիսիկի

գանգատը», «Ամէնից լաւ տունը», «Թռչունի մտածմունքը», «Բզեզի դպրոցը» եւ այլ գործերի:

Առաջիմ այդ երկերի սկընդարիւրների որոնումները ցանկալի արդիւնքների չեն յանդեցրել: Էդուարդ Զրբաշեանը «Վերակերտման արուեստը» ծաւալուն յօդուածում բանասիրական հանգամանալից քննութեամբ ներկայացրել է այդ բանաստեղծութիւնների փոխադրութեան, դրանց հայացման թումանեանական սկզբունքները<sup>32</sup>:

Գրական լուրջ քննութեան արդիւնքում անուանի թումանեանագէտը եզրակացնում է, որ «Բզեզի դպրոցը» «քառիս քուն իմաստով թումանեանի ինքնուրոյն ստեղծագործութիւնն է, որովհետեւ ուս բանաստեղծի մօտ դրանք հեռաւոր կերպով յիշեցնող երկու տող կայ միայն: Բայց որպէսզի այս «հատիկից» ծնուէին «Բզեզի դպրոցի» ամբողջական կառոյցն ու կոնկրետ պատկերները, պէտք է կատարուէր մի իսկական բանաստեղծական հրաշագործութիւն, որի քոյր գաղտնիքները տըրամարանական լեզուով քացատրել հնարաւոր չէ: Դրա համար պէտք էր թումանեան լինել՝ ժողովրդական բանահիւսութեան եւ այլազգի հեղինակների երկերը նորովի վերակերտելու եւ կատարելագործելու անմրցելի կարողութեամբ»<sup>33</sup>:

Վստահ ենք, որ «Հասկերի» եւ «Լուսաբերի» միւս բանաստեղծական փոխադրութիւնները, որոնցից իւրաքանչիւրը մանկական գրականութեան մի գլուխգործոց է եւ վաղուց լիիրաւ մտել է հայ մանկական գրականութեան ոսկէ Ֆոնդը, նոյնպէս թումանեանի ինքնուրոյն հեղինակային ստեղծագործութիւններն են:

«Հասկերն» ու «Լուսաբերը» մեծ չափով նպաստեցին նաեւ հէքիաթագրութեան ասպարէզում թումանեանի արդիւնաւէտ աշխատանքին: Նա թէ՛ մշակեց հայկական ժողովրդական հէքիաթներ, թէ՛ կատարեց բազմաթիւ օտարազգի հէքիաթների թարգմանութիւններ կամ փոխադրութիւններ:

Թումանեանը ոչ միայն իրեն շատ աւելի բանաստեղծ էր զգում, այլեւ կարծում էր, որ ինքը արձակ «պատահարը» է գրքում, ալսինքն, ինքն իրեն կոչումով արձակագիր չէր համարում:

Հետաքրքրական է, որ թատերադրական, գրամատուրգիական մի քանի փորձեր արած, սակայն ոչ մի դրամա աւարտին չը-

<sup>32</sup> Արդ մասին տես Է.ԳՈՒԱՐԴ ԶՐԲԱՇԵԱՆ, «Փաստերի հետմերով», Ե., 2001, էջ 28:

<sup>33</sup> Է.ԳՈՒԱՐԴ ԶՐԲԱՇԵԱՆ, «Փաստերի հետմերով», գրականագէտի նոթեր, Ե., 2001, էջ 34:

Հասցրած բանաստեղծը ամբողջ կեանքում իրեն դրամատուրգ էր համարում, իսկ իր հրաշալի պատմուածքներով ու հէքիաթներով հայ գրականութիւնը հարստացրած, հայ արձակի մակարդակը զգալիորէն ու հապէս բարձրացրած բանաստեղծը ասում էր. «Ես արձակ գրում եմ պատահաբար, ես հո վիպասան չեմ, ես դրամատուրգ եմ» (ՀԶ, 102): Ստեփան Զօրեանի հետ գրուցելիս եւս մէկ անգամ կրկնել է իր այդ կարծիքը՝ ասելով, թէ «Գի՛ֆորը» պատահական բան է: Ես արձակ գրում եմ պատահաբար», Զօրեանը Թումանեանին պատասխանում է. «Այդպէս պատահաբար բաներ շատ գրեցէք» (ԹԺՀ, 123):

Մանկութիւնը համարելով մարդու կեանքի ամենարնգունակ շրջանը, երբ նա չորս կողմից նոր տպաւորութիւններ է ստանում եւ շարունակ զարգանում՝ Թումանեանը մանկական գրականութեան սովը իսկական աղէտ էր համարում: Նոյնիսկ իր կեանքի վերջում, երբ մի քանի գրողների ու յատկապէս իր եւ Աղայեանի ստեղծագործութիւնների շնորհիւ հայ մանկագրութիւնը զգալի առաջընթաց էր ապրել, Պօղոս Մակինցեանին ուղղուած 1922 թ. յուլիսի 22-ի նամակում ծայրայեղ վատառողջ բանաստեղծը գրում է. «Ասում ես՝ մանկական գրականութեան սով է:

Ճիշտ ես ասում: Բայց միայն էսօր չի եղ սովը: Էդ սովը միշտ էլ եղել է, եւ էսօր մանուկներ ունեցող էս ժողովուրդը կամ նրա մտաւորական ղեկավարները երբեք չհասկացան, թէ ինչքան ահուլի աղէտ է եղ սովը, եւ ինչ պէտք է անեն սրբա առաջն առնելու համար» (10, 423):

«Հասկերն» ու «Լուսաբերը» Թումանեանի կեանքում այդ սովի առաջն առնելու ամենակարճ ու արդիւնաւէտ ուղիներից էին:

Թումանեանը բարձրացրեց հայ հէքիաթագրութեան մակարդակը՝ հասցնելով գեղարուեստական կատարելութեան: Մի կողմից երեխաները արտակարգ յափշտակութեամբ էին կարդում այդ հէքիաթները, միւս կողմից «Մշակը» վիրաւորական ու անհեթեթ մեղադրանքներ էր ներկայացնում թէ՛ Թումանեան-հէքիաթագրին, թէ՛ «Հասկերում» ու «Լուսաբերում» տպագրուող հէքիաթների միւս հեղինակներին: 1909 թ. «Մշակի» յուլիսի 28-ին՝ ամսուայ վերջին երեքշաբթի օրուայ համարում լոյս տեսաւ Ռուբէն Դրամբեանի «Գրական մեծութիւնները բանագող» յօդուածը, որը ուղիղ մի շարաթ անց՝ օգոստոսի 5-ին եւ 6-ին, առիթ դարձաւ բանաստեղծի ամենատուր բանավիճակին յօդուածներից մէկին՝ «Ոչ գրական ոչնչութիւնները քննադատ» պամֆլետին, որը, լինելով Թումանեանի պատասխան ելոյթը մամուլում՝ միաժամանակ ժողովրդական բանահիւտութեան եւ գեղարուեստական

գրականութեան յարաբերութեան հարցի շուրջ թուամանեանական տեսութեան փայլուն արտայայտութիւնն էր:

«Բանագորութեան» մեղադրանքը ներկայացուում էր ոչ միայն թուամանեանին, այլև նրա գրչակից ընկերներին, «Լուսարբերի» համահեղինակներին: Յօդուածը լի էր գրական կեանքում յայտնի անունների ու հեղինակութիւնների՝ «մեծութիւնների» հանդէպ ատելութեամբ ու շարութեամբ, «լուրջ կրիտիկայով» նըրանց խարագանելու, «սանձահարելու», «ամենախիստ ձեւով» կռուելու, «կծու, խայթիչ լեզուով» հարուածելու, անուանարկելու կրքով ու մղումով: Թուամանեանը վերոյիշեալ այլ հեղինակների հետ միասին հռչակում էր քննադատական «մերկացումներ» «կրթիչ ազդեցութեանը» չենթարկուող մի բանագող, որը «մեր մտաւոր կեանքի լեցանն է, ազգային գործունէութեան «աւերիչ ժանտախտը», որի հեքիաթները «մեր կեանքի կեղտերն են»<sup>34</sup>:

«Գրական շանտաժը մեզանում կարծէք թէ կամաց-կամաց սովորական երեւոյթների շարքն է մտնում, - գրում է Դըրամբեանը: - Գողութիւնը շարունակուում է եւ երեւի վերջ չի ունենալ... Ի՞նչ սպասել, երբ բանագողութեան այտոր վարակել է մեր գրական եւ հասարակական ասպարէզում յայտնի որոշ դիրք ունեցող գործիչներից շատերին: Բաւական է: Պէտք է վերջ դնել այդ աւերիչ ժանտախտին»<sup>35</sup>:

Թէեւ Դըրամբեանի յարձակումը միայն թուամանեանին չէր ուղղուած, բայց հէնց նա էր առաջամարտիկը ցանկացած կրուում, միշտ պայքարի առաջին գծում էր պաշտպանում այն ամէնը, ինչ թանկ էր իր համար: Այս անգամ յարձակման էր ենթարկուել ժողովրդական բանահիւսութիւնից օգտուելու գրողի իրաւունքը: Հակառակորդին սուր ու ոչնչացնող պատասխան գրելու պատճառներից մէկն էլ այն էր, որ հէնց սկզբից բանաստեղծի աչքից չվրիպեց այդ տգեղ երեւոյթի համատարած, ժամանակի համար բնորոշ լինելը, եւ նա, մասնաւորից դէպի ընդհանուրը, փաստից դէպի երեւոյթը գնալով, յանձին Դըրամբեանի իր պայքարն ուղղեց դրամբեանի դէմ:

Ամէն անգամ գորշութեան ու սգիտութեան հանդիպելիս թուամանեանը ցաւ էր ապրում, սակայն երբ այդ սգիտութեանը գումարւում էր շարութիւնն ու նենգութիւնը, մարտնչելու մարմաջը, թոյնն ու մաղձը այն ամէնի դէմ, ինչ վեճ ու լուսաւոր է, նա զայրանում էր ու վրդովւում: Տուեալ դէպքում սգիտութիւ-

<sup>34</sup> «Մշակ», Թիֆլիս, 1909, թիւ 162, յուլիսի 28:

<sup>35</sup> Նոյն տեղում:

նր բանահաւաքի եւ բանաստեղծի տքնութեան ու տաղանդի միջեւ հաւասարութեան նշան դնելն էր, որը ժամանակի համար բաւական տարածուած եւ իշխող տեսակէտ էր եւ ոչ միայն հայ գրական կեանքում: Հերթական անգամ նրա ստեղծ կանգնած էր ժամանակի երրորդական, չորրորդական կարգի մի լրագրող, որի անունը անմահացաւ մեր քննադատութեան պատմութեան մէջ միայն Թումանեանի պատասխանի շնորհիւ: Դիմելով «գրական մեծութիւններ սանձահարող անսանձ փոքրութեանը»՝ «չնչին մարդուկին», որի ներսում «մաղձը շարժում է», Թումանեանը գրում է. «Ես ֆանաչում եմ ձեզ: Դու՛մ մի որեւէ Ռ. Դրամբեան չէ՛: Դու՛մ մի՛նը չէ՛: Դու՛մ շատ է՛: Դու՛մ տիպ է՛: Դու՛մ էն պատիկ, մաղձոտ ու մութ հոգին է՛, էն յալիտեակակն անկոչ պրոկուրորը, որ ամէն տեղ, ուր կ'երևայ միայն «գիպուածով» լսած լինելով մի բան, դատում ու դատապարտում է ամէն գործ ու գործիչ, առանց ֆանաչելու, առանց ամաչելու» (6, 161):

Հաստատելով ազգային բանահիւսութեան գանձարանից ազատօրէն օգտուելու գրողի անխախտ իրաւունքը, նա ժողովրդական նիւթից վերատեղծուած գեղարուեստական գործի արժէքը պայմանաւորում էր օգտագործողի շնորհքով ու տաղանդով, քանզի «ծաղիկը դրած է մէջտեղը եւ նոյն ծաղկից մեղուն մեղր է շինում, օձը՝ թոյն» (6, 167):

Թումանեանը Դրամբեանին, Մ. Բագրատունուն եւ իր միւս հակառակորդներին պատասխանում է «Զայրոյթի պատճառը», «Զարութեան ու կեղծաւորութեան դէմ» յօդուածներով, որոնց միայն սեւագրերն են պահպանուել: Թումանեանը գրանք գրեթէ աւարտին է հասցրել, սակայն չի յանձնել տպագրութեան:

Որպէս բանաստեղծ Թումանեանը հաւասարակշռուած տաղանդ էր, բայց եւ զգացմունքային անձնաւորութիւն, որի հոգում իւրաքանչիւր անարդարութիւն առաջացնում էր ընդվզող զգացմունքների բուռն պոռթկում, եւ նա բանավէճի տաք հետքերով իր խոհերն ու զգացմունքները յանձնում էր թղթին: Նա պատասխանում էր գրեթէ միշտ, որովհետեւ. «Իմ անունը Յովհաննէս Թումանեան է, եւ ես պատասխան էի տալու էն ամէնի համար, ինչ որ կրում է իմ ստորագրութիւնը» (6, 446): Սակայն զգացմունքների յորձանքին միշտ յաջողում էր կշռադատուած մօտեցում եւ յաղթում էր իրերին ու երեւոյթներին, նոյնիսկ իր հետ կատարուող ամէն ինչին «վերելից նայելու» տաղանդը:

Թումանեանին շատ աւելի գայրացնում էր այն, որ շարութիւնն ու կեղծաւորութիւնը ներխուժում են գրական-գեղարուես-

տական աշխարհ, ուր սոք զնոզը պարտաւոր է լինել «մարդավարի, բարի ու անկեղծ» (4, 429), որովհետեւ այդ աշխարհը ու գեղարուեստի մարդը պէտք է կատարեալ լինեն. «Գրական մարդը սուրբ է» (6, 429), հետեւաբար նրա քննադատը նոյնպէս պէտք է ազնիւ լինի, ունենայ «Ամէնից առաջ մա՛մուր սիրտ ու անկեղծ վերաբերմունք» (6, 429):

Իր սեւագիր յօդուածներից մէկում Թումանեանը արտայայտում է այն միտքը, թէ չարութիւնն ու դաժան հոգին անտանելի են միշտ, «բայց եւս առաւել անտանելի, երբ նա մտնում է գեղարուեստի պայծառ աշխարհ... քունաւորելու գրականութիւնն ու գրողի հոգին» (6, 455): Բայց այնուհետեւ ջնջում է այդ տողերը, որովհետեւ Թումանեանը Թումանեան չէր լինի, եթէ չարութիւնը հաւասարապէս չատէր ու չմերժէր բոլոր դրսեւորումներում ու բոլոր ասպարէզներում:

1909-1913 թթ. դրամբեանիզմի դէմ ուղղուած Թումանեանի սուր բանավիճային յօդուածները հոգեկան մեծ լարում, ցաւ ու գայրոյթ, անքուն գիշերներ ու տառապանք պատճառեցին բանաստեղծին, բայց դրանք դարձան լաւագոյն արդար ու անաչառ ընդորոշումները հայ գրականութեան ու քննադատական մտքի պատմութեան գատաստանին արժանացող, Հերոստրատի փառքով անմահացող բոլոր ժամանակների տղէտ, չար ու մաղձոտ քննադատի հաւաքական կերպարի մասին:

Թումանեանի քննադատական ժառանգութեան այդ էջը այսօր եւ միշտ կը մնայ իրրեւ հանճարեղ անհատի բողոքն ու ընդվզումը նրա կեանքը թունաւորող միջակութեան, գորշութեան ու փոքրութեան, նախանձի ու ստի, կեղծիքի ու յերիւրանքների դէմ:

«Լուսաբերը» վերահրատարակուեց անընդմէջ 15 տարի եւ իրրեւ դասագիրք օգտագործուեց եւ՝ արեւելահայ, եւ՝ արեւմտահայ դպրոցում: Այն դարձաւ նախախորհրդային չրջանի լաւագոյն դասագիրքը, հայ մանկական գրականութեան ամենագեղեցիկ էջերից մէկը: «Հասկերը» եւ «Լուսաբերը» նոր ուժով խրթանեցին, լայն հնարաւորութիւններ ստեղծեցին Թումանեան-մանկագրի տաղանդի բազմակողմանի դրսեւորման ու զարգացման համար: Հէնց այս չրջանում ամբողջացաւ Թումանեան-մանկագիրը, որի մասին էղուարդ Ջրբաշեանը գրում է. «Թումանեանի աւանդը հայ մանկական գրականութեան մէջ քացառիկ չափով մեծ է: Ոչ մի ուրիշ հայ գրող չի կարող մրցել նրա հետ

մանուկների աշխարհում ունեցած մասսայականութեամբ ու ազդեցութեան ուժով»<sup>36</sup>:

Քսաներորդ դարի երկրորդ տասնամեակում «Լուսաբերը» լաւագոյն դասագիրքն էր, իսկ թէ՛ կրթական-դաստիարակչական, թէ՛ գեղարուեստական առումով մանուկների համար լաւագոյն պարբերականներն էին «Հասկերն» ու Տ. Նազարեանի խմբագրած «Ազրիւր» ամսագիրը, «Տարագ» շաբաթաթերթը: «Լուսաբերի» խաղացած կարեւորագոյն դերը պայմանաւորուած էր նրա կազմողների, հեղինակների եւ յատկապէս Թումանեանի՝ այդ ասպարէզում ծաւայած լուրջ գործունէութեամբ: Էդուարդ Զրբաշեանը գրում է. «Այդ դասագրքի գեղեցիկ ձևաւորումը պրակները պատկանում են հայ դպրոցի պատմութեան երբեւէ գործադրուած լաւագոյն ձեւերիցների թուին եւ շատ կողմերով օրինակելի են մնում առայսօր: Ազգային դպրոցին, անող սերունդի դաստիարակութեանը նուիրումը մեծագոյն ուշադրութեան արժանի ցայտուն ապացոյց դժուար է ցոյց տալ, քան այն, որ այդ գործերին այդքան ժամանակ ու եռանդ են յատկացրել հայ գրականութեան երկու խոշորագոյն դեմքերը»<sup>37</sup>:

«Լուսաբեր» դասագրքի համընդհանուր յաջողութիւնը Թումանեանի նոր նախաձեռնութեան ազդակ է հանդիսանում:

1909 թ. Թումանեանը ձեռնամուխ է լինում բարձր դասարանների աշակերտների, նաեւ ընթերցող լայն շրջանների համար «Հայ գրողներ» քրեստոմատիան կազմելու աշխատանքներին Ղ. Աղայեանի, Ա. Ահարոնեանի եւ Վրթ. Փափագեանի հետ միասին: «Մշակը» տեղեկացնում էր. «Այս հատորը պետք է անցնեն մեր դպրոցների չորրորդ եւ հինգերորդ դասարաններում»<sup>38</sup>: Կազմողները «ցանկութիւն են յայտնում, որ իրանց աշխատութիւնը տարածուի նաեւ հայ գերդաստաններում»<sup>39</sup>: Այն նախատեսուած էր երկու գրքով, որոնցից իւրաքանչիւրը պէտք է ներկայացնէր հայ գրականութեան արեւելահայ եւ արեւմտահայ ճիւղերը: Ընտրութիւնը կատարուել էր հայ նոր գրականութեան 100-ամեայ շրջանից: Արեւելահայ գրականութեանը նուիրուած Ա հատորը լոյս է տեսնում 1909 թ. 688 էջ ծաւալով եւ վերահրատարակում է 1914 թ.:

<sup>36</sup> ԷԴՈՒՄԱՐԴ ԶՐԲԱՇԵԱՆ, «Թումանեան, ստեղծագործութեան պրոբլեմներ», Եր., 1988, էջ 17:

<sup>37</sup> ԷԴՈՒՄԱՐԴ ԶՐԲԱՇԵԱՆ, «Թումանեանը եւ հայ գրականութեան արանդրոցները», Եր., 1994, էջ 342:

<sup>38</sup> «Մշակ», 1909, թիւ 141, յուլիսի 2:

<sup>39</sup> Նոյն տեղում:

1909 թ. յունիսին գիրքը արդէն լոյս էր տեսել, իսկ 1910 թ. փետրուարին գրեթէ ողջ տպաքանակը սպառուել էր: «...Առաջին հատորը սպառուելու վրայ է», - վկայում է բանաստեղծը փետրուարի 17-ին, եւ գրքի կազմողները ձեռնամուխ են լինում երկրորդ տպագրութեան աշխատանքներին:

Թումանեանը դիմում է հասարակական կարծիքին եւ հրապարակայնորէն հարցնում է, թէ ընթերցողը որ գրողի որ գլուխածքն է ցանկանում տեսնել յաջորդ տպագրութեան մէջ եւ ինչ քանակութեամբ, ինչ փոփոխութիւններ է ցանկանում եւ ակնկալում: Այստեղ նոյնպէս բանաստեղծի կողմից գրեւորում է դիմացինի, ընթերցողի կարծիքը հարցնելու եւ նրա հետ հաշուի նստելու բնաւորութեան առանձնապատկութիւնը, ընդհանուր, հանրային մօտեցումները ուսումնասիրելու անհրաժեշտութեան գիտակցութիւնը եւ դրանք յարգելու ունակութիւնը:

Թումանեանի շարքային ընթերցողից, հանրութիւնից է հարցնում նոյնիսկ ընդգրկուած հեղինակներին վճարութիւթ հոնորարի չափի ու ձեւի մասին. «Վարձատրութիւնը տողավարձով պիտի լինի, քէ ուրիշ ձեւով, եւ որքան արձակին, որքան քանաստեղծութեանը» (6, 184): Խնդրում է մատնանշել չորս գրող, որոնք օգտակար կը լինեն տպագրութեան գործում:

«Հայ գրողների Բ» հատորը, որը լոյս տեսաւ առաջինից յետոյ մէկ տարի անց՝ 1910 թ. յունիսի վերջերին, 812 էջ էր պարունակում<sup>40</sup>: Այդ հատորն ընդգրկում էր 56 գրողների ստեղծագործութիւններ 47 համառօտ կենսագրականներով: Գիրքն ունէր նաեւ «Թիրքահայ գրողներ» վերնագիրը, որովհետեւ այդ հատորը ներկայացնում էր արեւմտահայ գրականութիւնը: Ընդ որում, ժողովածուում տեղ էին գտել ինչպէս տաղանդաւոր, արդէն կայացած գրողներ, յայտնի անուններ՝ Պետրոս Գուրեան, Մըկրտիչ Պէշիկիթաշեան, Յակոբ Պարոնեան, Երուանդ Օտեան, Միսաք Մեծարենց, Գրիգոր Զօհրապ, Սիւսանյոթ, Վահան Թէքէեան, Դանիէլ Վարուժան, Լեւոն Շանթ, Ռուբէն Սեւակ, այնպէս էլ ժամանակի գրական կեանքին մասնակից անուններ, ինչպէս Խրիմեան Հայրիկ, Յէլէկեան Սիմէոն, Ալեքսանդր Փանոսեան, Սուրէն Պարթեւեան, Ռեթէոս Պէրպլեան, Մերուժան Պարսամեան, եւ նոյնիսկ Խորէն Գալֆայեան, նաեւ թուով հինգ կին գրողներ՝ Թէոդոսիկ Տիկին Արչակունի, Անայիս (Տիկին Էւփիմէ

<sup>40</sup> Գիրքը լոյս տեսնելու մասին լուրը տպագրուել է յունիսի 2-ին Տեւ՝ «Հորիզոն», 1910, թիւ 143: «Հայ գրողներ Բ», Կազմեցին Ղ. Աղայեան, Յովհ. Թումանեան, Վ. Փափաղեան, Թիֆլիս, 1910, Տպարան, «Կուրտուրա» ընկ. Վէյեամբուովսկ. 18, էջ 3-րդ:

Աւետիսեան), Գալեմքերեան Տիկին Զարուհի, Զապէլ Եսայեան, Սրբուհի Տիւսաբ:

Քրեստոմատիայի «Մեր ընթերցողներին եւ ուսուցիչներին» խորագրով առաջարանում արտայայտուել է կազմողների անհանգրստութիւնը հայոց լեզուի եւ հայ գրականութեան երկճիւղ լինելու հանգամանքից: Աւելին, արձանագրուում էր, որ արեւելահայ ընթերցողին արեւմտահայ գրականութեան ընտանիքին ներկայացնելը «ուրիշ նպատակ չունի բացի լեզուականից»<sup>41</sup>:

Այդ երկու լեզուների միութեան խնդիրը մտահոգում էր հայ գրողներին ու բանաստեղծներին դեռեւս 19-րդ դարի վերջերից: Այդ հարցն էր արծարծուում Մանուկ Աբեղեանի «Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը»<sup>42</sup>, Մ. Մ. ստորագրութեամբ «Մի քանի խօսք մեր երկու գրական լեզուների մերձեցման մասին»<sup>43</sup> յօդուածներում: «Հայ գրողներ» ժողովածուի կազմողները առաջարկում էին. «Մեր ջանքը պէտք է լինի՝ իրար կարդալ, իրար հասկանալ եւ իրար մօտենալ՝ միանալու միտումով: Պէտք է իրար քերութիւններից խորշնեմ եւ առաւելութիւններից օգտուենք»<sup>44</sup>:

Արեւմտահայ գրականութեան քրեստոմատիան կազմելու գործում թումանեանին օգնել էր «Ամէնուն տարեցոյցը» կազմող Թէոդիկը՝ ժողովածուին անհրաժեշտ նիւթերը, լուսանկարներն ու կենսագրական տեղեկութիւնները հաւաքելու գործում: Նրա կրնոջ՝ Թէոդիկ Տիկին Արշակունու երկերը նոյնպէս գետեղուել էին գրքում: Կազմողներին՝ յատկապէս Պոյսում գտնուող Փափագեանին օգնել էր Հրանտ Ասատուրը: Ժողովածուում օգտագործուել էին նաեւ «Արծիւ» գրավաճառանոցի հրատարակած նիւթերը: Գրողների կենսագրական տեղեկութիւնները ներկայացուում էին գրքի վերջում այբբենական կարգով: Երբեմն միայն մի քանի նախադասութիւն կազմող համառօտ կենսագրութիւններում պարտադիր շեշտուում էր գրական շղթայում նրանց ունեցած դերը, գրապատմական ծառայութիւնը եւ ստեղծագործութիւններին բընորոշ առանձնայատկութիւնները: Պետրոս Դուրեանի մասին ասուում էր. «Խորին քախիծով, յուսահատ ու գրաւիչ շեշտով համակուած նրա բանաստեղծութիւնները անմոռանալի տպաւորու-

41 «Հայ գրողներ Բ», 1910, Թիֆլիս, էջ 3-րդ:

42 «Արարատ» ամսագիր, էջմիածին, 1897, թիւ 9-10, էջ 424-431, թիւ 11,12, էջ 494-503:

43 Նոյն տեղում, 1898, թիւ 3-4, էջ 128-137:

44 «Հայ գրողներ Բ», 1910, Թիֆլիս, էջ 3-րդ:

թիւն են թողնում: Լեզուն սահուն է, կոկիկ եւ անպանոյնութեան մէջ գողորիկ»<sup>45</sup>:

*Ըստ այդ կենսագրականների գնահատանքի՝ Ռուբէն Զարդարեանը «ունի շատ յաջող, տաղանդաւոր էջեր»<sup>46</sup>, Գրիգոր Զոհրապը «Պոլսի լուսագոյն արձակագիրներից է», իսկ «լեզուն կտրուկ է եւ ինքնատիպ»<sup>47</sup>, Վահան Թէքէեանը «ունի պատկերաւոր շքեղ ոն»<sup>48</sup>, Միսաք Մեծարեանը Պ. Դուրեանի նման «մեծատաղանդաւոր բանաստեղծներից է» եւ «ունի Դուրեանի նման քննուշ գրիչ, բայց լեզուական մեծ ֆոխոսիքի եւ պատկերաւորումների անհամեմատ անկի նուրբ ձեւեր»<sup>49</sup>: Շանթի լեզուն «...կոկիկ է, սահուն եւ քննուշ»<sup>50</sup>, իսկ «ամենալաւ բանաստեղծներից մէկը»՝ Ռուբէն Որբերեանը, ունի ինքնատիպ եւ ազդու, «մեյամադոս եւ թախծոս» գրիչ, «սակայն երբեմն որոտընդոս եւ կծու, յանդուգն թռիչքներով ու ըմբոստ ձրգտումներով հմայում է ընընրցողին»<sup>51</sup>: Յակոբ Պարոնեանը «հայոց մեծ երգիծարան է», որը «մինչեւ այժմ դեռ նմանը չունեցաւ»: Նրա երգիծանքը բնութագրուում է իրրեւ «մոլիերական, կծող, սուր... տեղ-տեղ ուղղակի աննման»<sup>52</sup>: Միամանթոն բնութագրուում է իրրեւ «սիմբոլիք գրող»<sup>53</sup>, որը տաղաչափական նոր ձեւերով է հարստացրել հայ գրականութիւնը՝ նաեւ որպէս «խորապէս մեյամադոս եւ տանջանքներով լի տեսարանների» հեղինակ, որի «պատկերաւորումները հասնում են յանախ արտաոց նրբութիւնների»<sup>54</sup>: Դանիէլ Վարուժանը նոյնպէս «ամենալաւ բանաստեղծներից է» եւ ունի «խնամուած ու բարձր ոն, գեղուն, զգացմունքներով լի էջեր՝ տոգորուած հայրենասիրական եւ ըմբոստացող ոգով»<sup>55</sup>: Այսպիսի գնահատականների չարժանացած հեղինակների կենսագրականները շատ աւելի սխեմատիկ տեղեկատուական բնոյթ ունեն:*

45 Նոյն տեղում, էջ 805:

46 Նոյն տեղում:

47 Նոյն տեղում:

48 Նոյն տեղում, էջ 806:

49 Նոյն տեղում, էջ 807:

50 Նոյն տեղում, էջ 808:

51 Նոյն տեղում:

52 Նոյն տեղում, էջ 809:

53 Նոյն տեղում:

54 Նոյն տեղում, էջ 810:

55 Նոյն տեղում:

Այդ երկու ծաւալուն հատորները առաւել լրիւ ու ամբողջական ներկայացնում են հայ նոր գրականութեան մօտ հարիւրամեայ շրջանը: «Հայ գրողներ» քրեստոմատիայի երկհատորեակը նշանակալից երեւոյթ է հայ գրականութեան պատմութեան մէջ, քանի որ դրանից առաջ եւ յետոյ չեն կազմուել այդպիսի լայն ընդգրկումներով, գրական ընթացքին մասնակից շուրջ հարիւր գրողների ստեղծագործութիւններ ներառող հատորներ՝ հեղինակների համառօտ կենսագրականներով:

1921 թ. Թումանեանը տեղեկանում է, որ Պոլսում եւս տըպագրութեան է յանձնուել «Լուսաբերի» Բ տարուայ գիրքը, որի երրորդ հրատարակութիւնը իրականացւում էր 1922 թ. ամռանը<sup>56</sup>: Այդ շրջանում Թիֆլիսում «Լուսաբերը» հրատարակելու համար Թումանեանի հետ բանակցում են Արեւելքի ամերիկեան նպաստամատոյց «Նիրիստրիլիֆ» ընկերութեան գործակալներ Մարտնըր եւ Դեւիսը: Ու թէեւ Շանթը վերջնականապէս եւ ընդմիշտ հեռացել էր եւ համարւում էր խորհրդային կարգերի ու հայրենիքի թշնամի, Թումանեանը չէր խուսափում նրա անունը տալուց եւ հեղինակային իրաւունքը պաշտպանելուց: Մտեփան Լիսիցեանին ուղղուած 1922 թ. օգոստոսի 12-ի նամակում գրում է. «Նարիւմանի հետ Դեւիսն եկաւ ինձ մօտ եւ խօսեցինք եւ յայտնեցի, որ մենք երեք ընկեր ենք» (10, 425): Ի հարկէ, ամերիկացիների ցանկութիւնը իրականութիւն չդարձաւ, բայց «Լուսաբերը» եւ «Հասկերը» դեռ երկար տարիներ պահպանեցին իրենց ազդեցութիւնը եւ մնացին անգերազանցելի հայ մանկագրութեան ասպարէզում: «Հասկեր» ամսագիրն ու «Լուսաբեր» դասագիրքը աւելի մեծացրեցին Թումանեանի համբաւն ու հռչակը մանուկների շրջանում:

Մանուկների աշխարհը Թումանեանի ամենասիրելի աշխարհն էր, ուր մշտապէս ձգտում էր նա իր դառնաթախիծ կեանքի ուրախ թէ տխուր բոլոր պահերին: Այդ աշխարհում էր որոնում հայոց վշտի ու վիհանում տառապած իր հոգու անդորրն ու խաղաղութիւնը, այդ աշխարհին էր ուզում տալ իր ողջ ունեցուածքը՝ մահկանացուի կեանքն ու առողջութիւնը, անմահի տաղանդն ու հանճարը: Հայ ժողովրդի օրհասին, Մեծ եղեռնի օրերին ոչ միայն անձամբ էր խնամում երեխաներին, որդեգրում

56

1921 թ. «Անուշ» ու «Թմկաբերգի ստումը» առանձին գրքով լոյս են տեսել Պոլսում «Փամանակալից մատենաշարով» (թիւ 36) վաղիկակ Ս. Բիւրատեանի հրատարակութեամբ՝ առանց Թումանեանի գիտութեան, այդ պատճառով նա հրատարակիչ Հայկ Պէրպէրեանին խնդրում է, որ տեղեակ պահեն իրեն եւ որեւէ հայ գրական մարմնի միջոցով իր լիազօրութեամբ յանձն առնեն իր հեղինակային «դատի» իրաւունքի պաշտպանութիւնը:

չնորհալի որբերին, իր ստեղծագործութեամբ յոյս ու լոյս ներչնչում, այլև խաղեր էր յօրինում նրանց համար, փորձում էր վերադարձնել մի վայրկեանում յօղս ցնդած նրանց մանկութիւնը: Մինչեւ կեանքի վերջին օրերը այդ գգուանքն ու գուրգուրանքը մանուկների աշխարհի հանդէպ ուղեկցում էր նրան, եւ բանաստեղծը, ինչպէս միշտ, Մոսկուայի հիւանդանոցում էլ կեանքի վերջին օրերին ձգտում էր վերադառնալ թէ՛ դէպի իր մանկութիւնը, թէ՛ առհասարակ դէպի մանուկը՝ «էն դալար հասակը, որ կոչւում է մանկութիւն»:

Իր յիսնամեակի օրերին Թումանեանը երեխաների՝ իր հանդէպ մեծարանքի, սիրոյ ու շնորհաւորանքի խօսքերին պատասխանում է. «Ես էլ ձեզ նման երեխայ եմ... Կեանքիս ամենապայծառ եւ ամենալաւ օրերն ու վայրկեանները դու՛ք էք ինձ տուել, սիրելի՛ մանուկներ, ձեզ հետ եմ եղել, ձեզնով եմ ապրել. ես եմ ձեզ երախտապարտ, եւ ոչ թէ դու՛ք ինձ պարտական»<sup>57</sup>:

Թումանեանը իր գգացմունքները միշտ գործով էր ապացուցում: Մանկական աշխարհի նրա սիրոյ առհաստիչեան դարձան «Հասկեր» մանկական ամսագիրը, «Լուսարեր» եւ «Հայ գրբողներ» դասագրքերը եւ նրա ողջ մանկական ստեղծագործութիւնը:

ՍՈՒՍԱՆԵՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

<sup>57</sup> ՆՈՒԱՐԴԻ ԹՈՒՄԱՆԵԱՆ, «Յովհաննէս Թումանեան (Օճնդեան 70-ամեակի առթիւ)», Ե., 1939, էջ 94:

## Hovhannes Tumanyan and Children's Literature

SUSANNA HOVHANNISYAN

(summary)

Some of the most important segments of Hovhannes Tumanyan's work include, "Lusaber" and "Hay Groghner", a series of children's tutorial textbooks, "Hasker", a children's journal, along with his contributions to the "Horizon" newspaper. Interesting as it is, however there is not enough detailed research in the field of children's literature, despite sporadic references by some intellectuals.

Tumanyan was fascinated by the rich and creative mind of children. In their pure and innocent world, his suffering soul strived to find peace. And so, he felt indebted, and wanted to devote his life, health, talent and genius to that world. During the Great Armenian Genocide of 1915, he adopted orphans with the intention to heal them with his affection, and instill in them the hope he wished would replace their lost childhoods. He continued to inspire children throughout his entire life. During his last days, lying in a Moscow hospital, the poet was trying to return to his own childhood. Here he wrote "To the Young Age Called Childhood".

In September 1905 the publishing house "Hasker" made Tumanyan one of the most productive and desired writer of children's literature, something that occupied his entire free time. In 1907 Stephan Lisitsyan initiated the publication of the textbook "Lusaber" and invited Levon Shant and Hovhannes Tumanyan to cooperate.

In the second half of October 1910 before leaving for Europe, Stepan Lisitsyan established the new editorial staff for "Hasker" with the presidency of Tumanyan.

"Hasker" and "Lusaber" greatly assisted the effective work of story teller who developed Armenian National fairy tales, as well as accomplished lots of translations of foreign tales. "Lusaber" continued to be published for 15 years continuously and as a textbook was used both in the West and East Armenian schools. It became the best textbook of the pre-Soviet period, one of the most beautiful pages of Armenian children's literature. "Hasker" and "Lusaber" gave ample opportunities for the multilateral evolution of his talent. Tumanyan expressed his feelings by his work. The best proof of his love was "Hasker" children's journal, tutorial textbooks "Lusaber" and chrestomathy "Hay Groghner" and all his children's literature.